«ՀԵՐԻԹԸՋ ՖԱՈՒՆԴԵՅՇՆԻ» ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԻ ՇՈՒՐՋ

Արա Մարջանյան

Հոդվածը որոշակի առումով շարունակում է «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան» տեղեկագրի շրջանակներում հրատարակված «Հայաստան-տարածաշրջան-աշխարհ. թվեր և փաստեր» խորագրի առաքելությունը: Խորագրի ստեղծումը պայմանավորված է հետևյալ հարցին գոնե մասամբ պատասխանելու ցանկությամբ. ո՞րն է Հայաստանի տեղն արդի աշխարհում, որո՞նք են արձանագրված ձեռքբերումները և ձախողումները: Ինչպիսի՞ն է պատկերը միտումների առումով և համադրության մեջ: Բացի այդ, միջազգային այս կամ այն տեղեկատուում Հայաստանին վերաբերող վարկանիշային տվյալների մասին հայրենական ԶԼՄ-ում պարբերաբար հայտնվող հակիրճ և հաճախ մակերեսային հրատարակումները չեն կարող բավարարել ընթերցողի հետաքրքրությունը: Մեր նպատակը այդ տվյալների համարժեք ընկալման համար հնարավորինս մանրամասն և անաչառ տեղեկատվություն ներկայացնելն է:

1. «Հերիթըջ Ֆաունդեյշն». Տնտեսական ազատության ցուցիչների ամենամյա տեղեկատուներ

1973թ. հիմնադրված «Հերիթըջ Ֆաունդեյշն»-ը (ՀՖ, «Ժառանգություն հիմնադրամ») հասարակական կազմակերպություն է, հետազոտական ու կրթական հաստատություն, ԱՄՆ Հանրապետական կուսակցության մտավորական կադրերի դարբնոց, նաև ԱՄՆ պահպանողական քաղաքական դաշտի ամենաազդեցիկ փորձագիտական կենտրոններից մեկը, որը 1995-ից ի վեր կանոնավորապես կազմում և հրատարակում է աշխարհի ավելի քան 150 երկրների «Տնտեսական ազատության ցուցիչները» (ՏԱՑ) ամենամյա տեղեկատուն: Մեր նախորդ ուսումնասիրություններում արդեն անդրադարձել ենք Հայաստանի և մեր տարածաշրջանի երկրների վերաբերյալ 1996-2004թթ. ՀՖ ՏԱՑ տեղեկատուների տվյալներին [1]:

Այսպես, համաձայն ՀՖ 2003թ. տեղեկատուի՝ «1996-2003թթ. ժամանակահատվածը Հայաստանի տնտեսական դաշտի էական ազատականացման տարիներն էին: 2001-2002թթ. Հայաստանը դարձավ ոչ միայն ԱՊՀ, այլ նաև

մեր տարածաշրջանի 6 երկրների[1] մեջ տնտեսական ազատության առաջատարը: Այն ճանաչվեց մեր տարածաշրջանի միակ *«Հիմնականում ազատ»* տնտեսությամբ երկիրը՝ այդ դիրքում փոխարինելով Թուրքիային» [1, էջ 72]: 2004թ. ՀՖ տեղեկատուն ընդհանուր նպաստավոր գնահատականների հետ մեկտեղ արձանագրել էր հանրապետության տնտեսական ազատականացման տեմպերի դանդաղում՝ առաջին անգամ 1999-ից ի վեր, ինչը պայմանավորված էր *ստվերային «սև շուկա», «կարգավորում»* և *«ռռճիկներ և գներ»* բաղադրիչների գնահատականներով: 2005-2006թթ. ՀՖ տեղեկատուներում բերվում էին Հայաստանի տնտեսական ազատականացման աստիճանի բավական բարձր գնահատականներ՝ առկա թերացումների մասին ընդհանուր առմամբ հավասարակշռված և հավաստի գնահատումներին զուգահեռ: Այս տեղեկատուներում նույնպես ամրագրված էր Հայաստանի՝ իբրև տնտեսական ազատությունների առումով տարածաշրջանային բացարձակ առաջատարի, կարգավիճակը: Ելնելով ՀՖ փորձագետների արժեքային համակարգից՝ դժվար չէ հասկանալ, որ նրանց համար «տնտեսական ազատությունը» պարզապես «ազատության» հոմանիշն է, որը «Ժառանգություն հիմնադրամի» համար բացարձակ արժեք է:

2. ՀՖ 2007թ. ՏԱՑ տեղեկատու. փաստեր

2007թ. հունվարի վերջին հրատարակվեց ՀՖ այս տարվա Տնտեսական ազատության տեղեկատուն [2]: Այն ս.թ. մարտի սկզբին տեղակայվեց նաև հիմնադրամի ինտերնետային կայքում[2]: Համաձայն այս տեղեկատուի տվյալների[3]՝ տնտեսական ազատության աստիճանով Հայաստանը դիտարկված 157 երկրների մեջ շարունակում է զբաղեցնել «պատվավոր» 32-րդ տեղը՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Հարավային Կորեան, Մեքսիկան, ՌԴ-ն:

Մեջբերում տեղեկագրից. «Տնտեսական ազատությամբ աշխարհի 32-րդ երկիրը՝ Հայաստանը, Եվրոպական տարածաշրջանի 41 երկրների շարքում զբաղեցնում է 19-րդ տեղը՝ գերազանցելով միջին եվրոպական գնահատականը: Տպավորիչ մի սխրանք լեռներում ծվարած ու աղքատ նախկին ԽՍՀՄ հանրապետության համար: Հայաստանն ունի ֆիսկալ, մոնետար, ֆինանսական, գործարար և աշխատուժի ազատությունների բարձր գնահատականներ: Մեծ է կառավարությունից ազատության աստիճանը: …

[1] Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստանի Դաշնություն: Վերջինս մեր տարածաշրջանային երկրների շարքում դիտարկվում է Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային համակարգերում իր ակտիվ դերակատարման փաստից ելնելով:
[2] http://www.heritage.org
[3] *Հավելված Ա-ում* բերվում է ՀՖ 2007թ. տեղեկատուում քննարկվող աշխարհի 157 երկրների ՏԱՑ վարկանիշային ամբողջական աղյուսակը:

Սղաճը ցածր է, բանկային համակարգը՝ ամբողջությամբ մասնավոր ու լավ կառավարվող, կոմերցիոն կանոնակարգերը՝ ճկուն և համեմատաբար պարզ: Բացառությամբ հողի սեփականության, արտաքին ներդրումների համար սահմանափակումները սակավաթիվ են: Սեփականության իրավունքի ամրապնդման և կոռուպցիայից ազատության ասպարեզներում Հայաստանը դեռ առաջխաղացման կարիք ունի: Դատական համակարգը համեմատաբար թույլ է և ենթակա քաղաքական միջամտման: Այնուամենայնիվ, նախկին ԽՍՀՄ հանրապետության համար Հայաստանը ցուցաբերում է ազատությունների տպավորիչ աստիճան» [2, p. 85]:

Ընդհանուր առմամբ հաճելի գնահատական, առավել ևս, որ այն միանգամայն համապատասխանում է իրականությանը: Ի դեպ, այն համահունչ է Հայաստանին ՀՖ կողմից նաև նախկինում տրված գնահատականներին:

Եվ հանկարծ, նույն 2007թ. տեղեկատուում հանդիպում ենք հետևյալին. «Այս տարվա ընթացքում Հայաստանի ՏԱՑ արժեքը սրընթաց նվազել է 5.1%-ով, ինչը, մասամբ, նոր մեթոդաբանության կիրառման հետևանք է»: Հարցն ավելի է խորանում, երբ անդրադառնում ենք ՀՖ ինտերնետային կայքում զետեղված[1] 1995-2007թթ. համար ՀՖ դիտարկած բոլոր երկրների ՏԱՑ գնահատականների գրադարանին՝ արդեն վերահաշվարկված 2007թ. ՀՖ տեղեկատուում օգտագործված *նոր մեթոդաբանությամբ: Նկար 1-ում* նշված ժամանակահատվածի համար պատկերել ենք մեր տարածաշրջանի 6 երկրների ՏԱՑ արժեքները: Հստակ նկատելի են Հայաստանի համար 2007թ. գնահատականների էական վատթարացումը և, դրան զուգընթաց, հարևան Վրաստանի և Թուրքիայի ՏԱՑ գնահատականների շոշափելի աճը:



[1] http://www.heritage.org/research/features/index/

Հարցը մտահոգիչ է դառնում ՀՖ տվյալների գրադարանի մեր մանրամասն վերլուծությունից հետո: Դրա արդյունքները վկայում են, որ Հայաստանի ՏԱՑ արժեքի նվազումը տեղեկատուում դիտարկված բոլոր երկրների շարքում կրում է եզակի և արտառոց բնույթ: Այսպես, *Նկար 2-ում* պատկերված է տեղեկատուում դիտարկված «Եվրոպա» տարածաշրջանի բոլոր 41 երկրների ՏԱՑ այս տարվա գնահատականների փոփոխությունը 2006թ. համեմատ: Համաձայն ՀՖ փորձագետների, ինչպես երևում է *Նկար 2-ում,* «Եվրոպա» տարածաշրջանում Հայաստանը (-5.1% վատթարացում) և Վրաստանը (+3.9% բարելավում) գտնվում են բևեռային հակադիր դիրքերում: Պատկերը պահպանվում և նույնիսկ ավելի ընդգծված է դառնում, եթե դիտարկում ենք բոլոր 157 երկրները: Այս դեպքում Հայաստան-Վրաստան բևեռային զույգին գերազանցում է միայն Բանգլադեշ (վատթարացում՝ -6.6%) և Մարոկո (բարելավում՝ +4.4%) զույգը (տե՛ս *Նկար 2-ի* պատուհանում): Տարօրինակ է նաև այն, որ համաձայն այս տեղեկատուի՝ Հայաստանը և Վրաստանը դասվում են *«Մասամբ ազատ»* երկրների խմբին: Մինչդեռ, ինչպես վերը նշել ենք, ՀՖ ավելի վաղ գնահատականների համաձայն՝ Հայաստանը տարածաշրջանում միակ *«Հիմնականում ազատ»* երկիրն էր:



Այսպիսով, դատելով ՀՖ 2007թ. տեղեկատուի տվյալներից՝ կարելի է եզրակացնել, որ տնտեսական ազատականացման փոփոխման առումով Հայաստանի և Վրաստանի միջև անջրպետը կազմված է ոչ միայն «Եվրոպա» տարածաշրջանի 39 երկրների, այլև նույնիսկ ողջ աշխարհի 153 երկրների գնահատականներից ելնելով: Այս տեղեկատուի էջերում Հայաստանը և Վրաստանը հայտնվել են հակադիր բևեռներում, ինչը ՀՖ Տնտեսական ազատության տեղեկատուների ավելի քան տասնամյա պատմության ընթացքում մեր հանրապետության և նրա անմիջական հարևանի գնահատականների առումով իրոք արտառոց երևույթ է և արժանի ավելի մանրամասն քննարկման:

3. ՀՖ 2007թ. ՏԱՑ տեղեկատու. նոր մոտեցումներ

Նախորդ տարիների համեմատ ՀՖ 2007թ. տեղեկատուն կարևոր առանձնահատկություններ ու էական փոփոխություններ ունի: Դրանք մեթոդաբանական բնույթի ընդհանուր, ինչպես նաև մասնավոր փոփոխություններ են՝ Հայաստանին և տարածաշրջանին անմիջականորեն վերաբերող առանձնահատկություններով:

Փորձենք պատասխանել այն հարցերին, թե ինչ նոր մեթոդաբանություն է կիրառված տեղեկատուում, որը, ՀՖ փորձագետների խոսքերով, վերը նշված արդյունքների պատճառն է, այն էլ՝ մասամբ, որոնք են մյուս պատճառները: Ընդ որում, ամենևին չենք հավակնում *գնահատել* կատարված փոփոխությունների հիմնավորվածությունը կամ արդյունավետությունը. այս հարցերի վերաբերյալ ծավալուն քննարկումների արդյունքները կարելի է գտնել հենց ՀՖ կայքում: Մեր նպատակն է միայն հնարավորինս սեղմ և հստակ նկարագրել այս փոփոխությունները՝ հետագա վերլուծության համար:

3.1. Ընդհանուր մեթոդաբանական փոփոխություններ

ՀՖ նոր մեթոդաբանությունը հիմնված է ՏԱՑ գնահատման տոկոսային և *անընդհատ (continuous)* սանդղակի վրա: Այս նորամուծությունը վերջ դրեց դեռ 1995թ. առաջին հրատարակումներից սկսած ՀՖ փորձագետների կողմից օգտագործվող երկրների ՏԱՑ գնահատման *դիսկրետ, կարգային (bracket scoring)* կիրառմանը: Հին մոտեցման հիմքում ընկած էր տվյալ երկրի ՏԱՑ գնահատումը՝ 1.0-ից մինչև 5.0 դիսկրետ արժեքային տիրույթում: Ընդ որում, որքան փոքր էր գնահատվում ՏԱՑ արժեքը, այնքան ազատ էր համարվում տվյալ երկրի տնտեսական դաշտը. 1.0 ՏԱՑ գնահատականով երկիրը հանդիսանում էր առավել ազատ, իսկ 5.0 գնահատականը համապատասխանում էր «Ոչ ազատ», ռեպրեսիվ տնտեսական համակարգով երկրի:

2007թ. ՀՖ տեղեկատուում պատկերը հակառակն է. որքան մեծ է ՏԱՑ տոկոսային գնահատականը, այնքան ավելի տնտեսապես ազատական է ճանաչվում տվյալ երկիրը: Նոր մեթոդաբանությամբ ՏԱՑ 100% արժեքը համապատասխանում է նախկին 1.00 գնահատականին, իսկ 0%-ը՝ 5.00-ին: Տոկոսային գնահատման անընդհատ սանդղակի կիրառումը հանգեցնում է նրան, որ, օրինակ, ՏԱՑ 69.4% գնահատական ստացած երկիրը (Հայաստան, 2007թ.) ներկայանում է ՏԱՑ հենց այս արժեքով, այլ ոչ թե 70% կամ 60% կարգերում:

Հաջորդ էական առանձնահատկությունը հետևյալն է: Հին մեթոդաբանության համաձայն (ներմուծված 2000թ.)՝ մոտ 150 երկրների ՏԱՑ արժեքների որոշումից հետո դիտարկված բոլոր երկրները դասակարգվում էին ըստ *չորս* «որակական» դասերի: *«Ազատ»* տնտեսությամբ երկրների դասում այն երկրներն էին, որոնց ՏԱՑ գնահատականները գտնվում էին 0.00-1.95 արժեքային տիրույթում: 2.00–2.95 արժեքային տիրույթը վերապահված էր *«Հիմնականում ազատ»* երկրների դասին, 3.00–3.95 տիրույթը՝ *«Հիմնականում ոչ ազատ»* և 4.00-5.00 տիրույթը՝ *«Ոչ ազատ (ռեպրեսիվ)»* երկրների դասերին: Տեղեկատուում պատկերը հիմնականում նույնն է, սակայն դասակարգումն իրականացվում է արդեն ըստ *հինգ* դասերի: Նախորդ 4-ին ավելանում է *«Մասամբ ազատ»* երկրների միջանկյալ դասը: Նոր դասակարգումն ունի հետևյալ տեսքը. «Ազատ» տնտեսությամբ երկրների դաս, ՏԱՑ 80.0-100% արժեքային տիրույթով, «Հիմնականում ազատ»՝ 70.0 - 79.9%, «Մասամբ ազատ»՝ 60.0- 69.9%, «Հիմնականում ոչ ազատ»՝ 50.0- 59.9% և «Ոչ ազատ (ռեպրեսիվ)»՝ 0.0- 49.9%:

Տեղեկատուում նոր դասակարգման մասին բերված այս մանրամասները բավարար չեն կատարված փոփոխությունների հստակ ընկալման համար և նույնիսկ ստվերում են դրանց էությունը: Այս փոփոխություններն ավելի ակնառու պատկերելու նպատակով *Նկար 3-ում* պատկերել ենք ՏԱՑ դասակարգման հին և նոր սանդղակները: Բերված են նաև յուրաքանչյուր դասի ՏԱՑ համապատասխան արժեքները՝ հին (ՏԱՑ 0.05 միավոր քայլով) և նոր (ՏԱՑ 1.25% միավոր քայլով) մեթոդաբանության հա-

Նկար 3

մինչ 2007թ.		ՀՖ 2007թ.	
Ազատ	1.00	100%	Ազատ
	1.05	98.75%	
	1.10	97.50%	
	1.15	96.25%	
	1.20	95.00%	
	1.25	93.75%	
	1.30	92.50%	
	1.35	91.25%	
	1.40	90.00%	
	1.45	88.75%	
	1.50	87.50%	
	1.55	86.25%	
	1.60	85.00%	
	1.65	83.75%	
	1.70	82.50%	
	1.75	81.25%	
	1.80	80.00%	
	1.85	78.75%	Հիմնականում ազատ
	1.90	77.50%	
	1.95	76.25%	
Հիմնականում ազատ	2.00	75.00%	
	2.05	73.75%	
	2.10	72.50%	
	2.15	71.25%	
	2.20	70.00%	
	2.25	68.75%	Մասամբ ազատ
	2.30	67.50%	
	2.35	66.25%	
	2.40	65.00%	
	2.45	63.75%	
	2.50	62.50%	
	2.55	61.25%	
	2.60	60.00%	
Հիմնականում ոչ ազատ	2.65	58.75%	Հիմնականում ոչ ազատ
	2.70	57.50%	
	2.75	56.25%	
	2.80	55.00%	
	2.85	53.75%	
	2.90	52.50%	
	2.95	51.25%	
Ոչ ազատ (ռեպրեսիվ)	3.00	50.00%	Ոչ ազատ (ռեպրեսիվ)
	3.05	48.75%	
	3.10	47.50%	
	3.15	46.25%	
	3.20	45.00%	
	3.25	43.75%	
	3.30	42.50%	
	3.35	41.25%	
	3.40	40.00%	
	3.45	38.75%	
	3.50	37.50%	
	3.55	36.25%	
	3.60	35.00%	
	3.65	33.75%	
	3.70	32.50%	
	3.75	31.25%	
	3.80	30.00%	
	3.85	28.75%	
	3.90	27.50%	
	3.95	26.25%	
	4.00	25.00%	
	4.05	23.75%	
	4.10	22.50%	
	4.15	21.25%	
	4.20	20.00%	
	4.25	18.75%	
	4.30	17.50%	
	4.35	16.25%	
	4.40	15.00%	
	4.45	13.75%	
	4.50	12.50%	
	4.55	11.25%	
	4.60	10.00%	
	4.65	8.75%	
	4.70	7.50%	
	4.75	6.25%	
	4.80	5.00%	
	4.85	3.75%	
	4.90	2.50%	
	4.95	1.25%	
	5.00	0.00%	

մաձայն: Ինչպես տեսնում ենք, նոր սանդղակը զգալիորեն «խիստ» է իր գնահատականներում: Այսպես, էականորեն ընդլայնվել է «Ոչ ազատ» երկրների տիրույթը. այն համարյա ամբողջությամբ ներառում է հին սանդղակի վերջին երկու դասերը: Նեղացված է «Ազատ» երկրների նոր տիրույթը: Իսկ նախկին «Հիմնականում ազատ» երկրների դասին նոր սանդղակում համապատասխանում է միանգամից երեք դաս. «Հիմնականում ազատ», «Մասամբ ազատ» և «Հիմնականում ոչ ազատ»: Ընդ որում, «Մասամբ ազատ» երկրների միջանկյալ նոր դասը համապատասխանում է հին սանդղակի «Հիմնականում ազատ» երկրների արժեքային տիրույթի միջնամասին: Հիշեցնենք, որ տեղեկատուում նոր սանդղակի հենց այս դասի վերին եզրում է գտնվում Հայաստանն իր ՏԱՑ համարյա սահմանային՝ 69.4% գնահատականով: Նմանօրինակ վիճակում են հայտնվել նաև Չեխիան և Ուրուգվայը (տե՛ս *Հավելված Ա):*

Այսպիսով, կարծես թե կարելի է եզրակացնել, որ նախորդ գնահատականների համեմատ Հայաստանի ՏԱՑ նոր գնահատականի «որակական», դասային փոփոխումը [2]-ում իրոք տեղի է ունեցել հիմնականում նոր մեթոդաբանության կիրառման հետևանքով՝ միջանկյալ նոր դասի նորամուծությամբ: Փաստենք, որ ՀՖ հին սանդղակի համաձայն՝ Հայաստանը կշարունակեր մնալ «Հիմնականում ազատ» երկիր՝ միակը մեր տարածաշրջանում:

Բայց, մի՞թե սա է բոլորը: Ինչո՞ւ է ընդհանրապես ներմուծվել այս նոր սանդղակը: Ինչո՞ւ է Հայաստանը հայտնվել այս նոր սանդղակի նոր միջանկյալ դասի հենց սահմանին: Չէ՞ որ 2006թ. ՏԱՑ գնահատականից (74.6%) նույնիսկ շոշափելի՝ 3.0-4.0% նահանջի դեպքում մեր հանրապետությունը կապահովեր «Հիմնականում ազատ» երկրի կարգավիճակը ՀՖ նոր մեթոդաբանության համաձայն: Ինչո՞վ է պայմանավորված Հայաստանի ՏԱՑ այսքան էական (5.1%) նահանջը՝ բավարար երկրի գնահատականում «որակական» բնույթի փոփոխման համար: Այս և այլ հարցերի պատասխանը ենթադրում է հետագա քննարկման անհրաժեշտություն:

3.2. Փոփոխություններ ՏԱՑ բաղադրիչներում

ՀՖ տեղեկատուներում, և՛ հին, և՛ նոր մեթոդաբանությունների համաձայն, տվյալ երկրի ՏԱՑ գնահատականը հաշվարկվում է այդ երկրի տնտեսության ազատությունը բնութագրող 10 որոշակի բաղադրիչների հիման վրա: ՏԱՑ արժեքի ձևավորման մեջ այս բաղադրիչներն ունեն *հավասար* կշիռներ: Ուստի, ՏԱՑ արժեքը որոշվում է պարզապես դրանց թվային արժեքների պարզ միջինացմամբ:

Մինչև 2007թ. մեթոդաբանական փոփոխությունը՝ այս 10 բաղադրիչները նույնպես գնահատվում էին 1.0-5.0 դիսկրետ արժեքային տիրույթում,

յուրաքանչյուրը՝ կախված մի շարք այլ պարամետրերի գնահատականներից: Ընդ որում, բաղադրիչների գնահատականները կրում էին հիմնականում «վարկանիշային» բնույթ, այլ ոչ թե որոշակի ելակետային տվյալների (սղաճ, պետբյուջեի կառուցվածք, ՀՆԱ աճի տեմպ և այլն) հիման վրա կատարված հաշվարկների արդյունք էին: ՀՖ 2007թ. տեղեկատուում օգտագործված են ՏԱՑ նույնպես տասը բաղադրիչներ, որոնք, միանգամայն համահունչ լինելով ՀՖ արժեքային համակարգին, այժմ անվանվում են «10 ազատություններ»: Օրինակ, նախկին «ստվերային տնտեսություն (սև շուկա)» բաղադրիչը վերանվանվել է «ազատություն կոռուպցիայից», իսկ նախկին «առևտրային քաղաքականություն» բաղադրիչին ներկայումս հիմնականում համապատասխանում է «առևտրային ազատությունը»: Միակ բացառությունը կազմում է «սեփականության իրավունք» բաղադրիչը, որը պահպանել է անվանումը: Դիտարկված է նաև նոր, նախկինում չկիրառված «աշխատուժի ազատություն» բաղադրիչը: Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված է հին և նոր մեթոդաբանությամբ դիտարկվող ՏԱՑ բաղադրիչների և ազատությունների ցանկը:

ՀՖ 1995-2006թթ. ՏԱՑ բաղադրիչներ	ՀՖ 2007թ. 10 ազատություններ
կարգավորում	1. գործարար ազատություն
առևտրային քաղաքականություն	2. առևտրային ազատություն
դրամային քաղաքականություն	3. ֆիսկալ ազատություն
պետական միջամտություն տնտեսությանը	4. ազատություն կառավարությունից
ռոճիկներ և գներ դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ կառավարության ֆինանսական ծախքեր	5. մոնետար ազատություն 6. ներդրումների ազատություն
բանկային և ֆինանսական համակարգ	7. ֆինանսական ազատություն
սեփականության իրավունք	8. սեփականության իրավունք
ստվերային տնտեսություն (սև շուկա)	9. ազատություն կոռուպցիայից
	10. աշխատուժի ազատություն

Նոր «ազատությունների» մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք այլևս գնահատվում են 0-100%, այլ ոչ թե նախկին 1.0-5.0 դիսկրետ տիրույթում: Աճել է նաև դրանց թվային գնահատականների «օբյեկտիվ» հաշվարկման աստիճանը: Այս իմաստով, նոր 10 «ազատությունները» կարելի է դասակարգել 2 խմբում: Առաջին խմբում են այն «հաշվարկային» ազատությունները, որոնց արժեքները հաշվարկվում են այս կամ այն բանաձևով՝ հիմնված տվյալ երկրի մակրոտնտեսական և այլ բնույթի «օբյեկտիվ» ցուցանիշների վրա: Դրանց թվին են պատկանում աղյուսակի առաջին 5 «ազատությունները»: Մյուս խումբը կազմված է մնա-

ցած 5 «ազատություններից», որոնց գնահատումն իրականացվում է ՀՖ փորձագետների կողմից վարկանիշային այս կամ այն սանդղակի օգնությամբ: Այս բաղադրիչներն այսուհետ ընդհանրացված կերպով կանվանենք «վարկանիշային»:



ՀՖ տեղեկատուներում ՏԱՑ տվյալները, ցավոք, մատուցվում են առանց գրաֆիկների: Այս բացը լրացնելու և տվյալ երկրի ՏԱՑ-ը ըստ նրա 10 «ազատությունների» մեկ ընդհանրական տեսքով պատկերելու նպատակով դիմել ենք, այսպես կոչված, «ռադարային դիագրամներին»: Տվյալ երկրի «ազատության վարդը»՝ ըստ ՏԱՑ 10 «ազատությունների», կառուցել ենք այնպես, ինչպես կառուցում են, օրինակ, քամու վարդն ըստ աշխարհագրական ուղղությունների: Հիմնվելով [2]-ում բերված տվյալների վրա՝ *Նկար 4-ում* պատկերել ենք կովկասյան 3 հանրապետությունների «ազատության վարդերը»: Համեմատության համար պատկերել ենք նաև «Եվրոպա» տարածաշրջանի ՏԱՑ առաջատար երկրի՝ Միացյալ Թագավորության «ազատության վարդը»:

Նկարում «ազատությունների վարդերի» միմյանց նկատմամբ բնութագրական շեղումներից հստակորեն կարելի է տեսնել դասական ազատական երկրի համեմատ նորանկախ, «անցումային երկրներին» բնորոշ առանձնահատկությունները. գերազատություն կառավարությունից և ֆիսկալ համակարգից՝ կոռուպցիայից թերազատության և թույլ սեփականության իրավունքի պարագաներում: Լավ նկատելի է նաև դասական ժողովրդավարական երկրի ազատության վարդի «ծաղկուն համաչափությունը» հատկապես դիագրամի «արևմտյան» հատվածում, ուր զետեղել ենք այն ազատությունները, որոնք գոյանում և ձևավորվում են ողջ հասարակության արժեքային համակարգի երկարաժամկետ ներազդմամբ:

Վերադառնանք ՀՖ ՏԱՑ նոր «ազատությունների» քննարկմանը: Կարևոր են ՀՖ նոր մեթոդաբանությամբ մի շարք ՏԱՑ «ազատությունների» սահմանման և հաշվարկման մանրամասները: Ուստի, դիտարկենք դրանք մի փոքր հանգամանալից:

ՀՖ թիվ 5՝ «հաշվարկային» ազատությունը «Մոնետար ազատությունն» է (ՄԱ), որը, ըստ ՀՖ փորձագետների, «շուկայական տնտեսության համար նույնն է, ինչ խոսքի ազատությունը՝ ժողովրդավարության համար» [2, p. 45]: Ու թեև ներկայումս բացակայում է ազատ հասարակության համար «ճիշտ» մոնետար համակարգի մասին միասնական տեսակետը, համաձայն ՀՖ փորձագետների՝ ընդունված է, որ այստեղ ամենակարևոր գործոններն են ցածր սղաճի պահպանումը և անկախ գործող Կենտրոնական բանկը: Համաձայնություն կա նաև այն բանի շուրջ, որ գների վերահսկումը խոցում է շուկայի արդյունավետությանը: Եվ իրոք, ՀՖ նոր մեթոդաբանությամբ ՄԱ արժեքը հաշվարկվում է՝ կախված 2 պարամետրերից. վերջին 3 տարիներին երկրում միջին կշռված սղաճից (ՄԿՍ) և գների վերահսկումից (ԳՎ): Տվյալ երկրում, տվյալ՝ i-րդ տարում Մոնետար ազատության արժեքը (ՄԱi) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՄԱ_i = 100 - d\,(a_1\,ՄԿՍi + a_2\,ՄԿՍ_{i-1} + a_3\,ՄԿՍ_{i-2})^{0.5} - ԳՎ_i, \quad (1)$$

ուր d, a_1, a_2 և a_3-ը բոլոր դիտարկվող երկրների համար միևնույն հաստատուն գործակիցներն են, $ՄԿՍ_i$, $ՄԿՍ_{i-1}$ և $ՄԿՍ_{i-2}$ տվյալ i-րդ և նախորդ 2 տարիներին միջին կշռված սղաճներն են, $ԳՎ_i$-ը գների վերահսկման «աստիճանը» բնութագրող մեծություն է, որ գնահատվում է ոչ թե տվյալ երկրում արձանագրված թվային այս կամ այն ցուցանիշի հիման վրա, այլ ՀՖ փորձագետների կողմից՝ [2]-ում և այլ հարակից հրատարակումներում չնկարագրված հիմունքներով: Այն գնահատվում է 0-20% տիրույթում և ունի այսպես ասած «տույժային» մասնահանման բնույթ:

Այսպիսով, ՄԱ օրինակով արձանագրենք, որ նոր մեթոդաբանության համաձայն՝ անգամ «հաշվարկային» ազատությունների որոշումը պարու-

նակում է «վարկանիշային» գնահատում: Վերջինս անհրաժեշտաբար իր մեջ կրում է սուբյեկտիվության տարր՝ հակառակ հաշվարկային գնահատումների, որոնք հիմնվում են տվյալ երկրի համար «օբյեկտիվ» տեղեկատվության վրա: Բացի նշված ՄԱ բաղադրիչից, այսպիսի տարրեր կան նաև «Առևտրային ազատության» հաշվարկային նոր բանաձևերում (ոչ սակագնային արգելքների գնահատում):

Թիվ 10 «վարկանիշային» ազատությունը ՀՖ նոր մեթոդաբանության նորամուծություն հանդիսացող «Աշխատուժի ազատությունն» է (ԱԱ): Այն որոշվում է բացառապես մեկ աղբյուրի տվյալների հիման վրա՝ Համաշխարհային բանկի կողմից կազմված *Doing Business 2007: How to Reform. World Bank* տեղեկատուի արդյունքների հիման վրա: Այս ազատության քննարկումը սահմանափակենք միայն նշելով, որ ԱԱ-ն հաշվարկվում է չորս պարամետրերի գնահատմամբ, որոնք ԱԱ ձևավորման մեջ ունեն միևնույն 25% կշիռը: Դրանք են. նվազագույն աշխատավարձը, աշխատաժամերի ֆիքսվածության աստիճանը, ավելորդ աշխատուժի ազատման դյուրինությունը և ավելորդ աշխատուժի ազատման ծախսատարությունը:

3.3. Տարածաշրջանային դասակարգման փոփոխություններ

ՏԱՑ 2007թ. տեղեկատուում և ՀՖ այլ հրատարակումներում ներմուծված հատկանշական նորություն է նաև երկրների տարածաշրջանային *նոր դասակարգումը:* Այսպես, նախկին մեկ միացյալ «Հյուսիսային Ամերիկա և Եվրոպա» տարածաշրջանի փոխարեն դիտարկված են երկու առանձին՝ «Եվրոպա» և «Ամերիկաներ» տարածաշրջանները: Համահունչ լինելով Մոնրոյի դոկտրինին՝ վերջինս ներառում է նախկինում օգտագործված «Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ» տարածաշրջանը՝ բուն «Հյուսիսային Ամերիկա» տարածաշրջանի հետ ամբողջությամբ: «Եվրոպան» առանձին է դիտարկվում՝ վերջ դնելով իր բնույթով «ատլանտյան» «Հյուսիսային Ամերիկա և Եվրոպա» տարածաշրջանային տերմինի կիրառմանը: Նկատենք, որ ավելի վաղ վերջ էր տրվել նաև ՏՀԶԿ[1] երկրների տարածաշրջանային համախմբման փորձերին: Իսպառ բացակայում է «ԱՊՀ խումբ» երկրների դիտարկումը: Հայաստանը և Վրաստանը, Թուրքիայի հետ մեկտեղ, կայունորեն դիտարկվում են «Եվրոպա» տարածաշրջանի ներքո: Հիշեցնենք, որ Թուրքիան ՀՖ վաղ հրատարակումներում մեկ դիտարկվում էր ընդլայնված «Միջին Արևելք», մեկ «Եվրոպա» տարածաշրջաններում և նույնիսկ առանձին: Ադրբեջանը ՀՖ 2007թ. տեղեկատուում դիտարկված է «Ասիա և Խ.Օ.» տարածաշրջանի ներքո:

[1] «Հյուսիսային Ամերիկա և Եվրոպա»՝ գումարած Ճապոնիա և Ավստրալիա:

3.4. Մասնավոր բնույթի փոփոխություններ

Ուշագրավ են նաև կովկասյան երեք հանրապետությունների վերաբերյալ [2]-ում բերվող մասնավոր դիտարկումները: Դրանք բերվում են տեղեկատուի 5-րդ բաժնում: Սովորաբար, այս բաժնում ՀՖ բոլոր տեղեկատուներում 2 էջի սահմաններում և միօրինակ կառուցվածքով նկարագրվում է տվյալ երկրի ընդհանուր տնտեսական-քաղաքական դիմագիծը՝ ՏԱՑ տասը ազատությունների գնահատման այլ մանրամասների հետ մեկտեղ: Ստորև բերում ենք այդ դիտարկումները Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար: (Ներկայացնում ենք նաև ՀՖ 2003 և 2004թթ. տեղեկատուներում բերված համապատասխան պարբերությունները՝ ինտոնացիոն փոփոխություններն առավել ցայտուն նշելու նպատակով: Թարգմանելիս խստիվ հետևել ենք բնագրերին):

ՀԱՅԱՍՏԱՆ [2, p. 85; 3, p. 85; 4, p. 85]

ՀՖ 2003թ. Անկախությունից ի վեր Հայաստանի տնտեսական զարգացումը եղել է ուժեղ՝ չնայած քաղաքական կայունության պակասին, Ադրբեջանի և Թուրքիայի հետ շարունակվող լարվածության *(tensions),* ինչպես նաև կոռուպցիայի մակարդակի ու էներգետիկայի բնագավառում սահմանափակումների նվազեցման ուղղությամբ ձախողումներին:

ՀՖ 2004թ. 1988-ից ի վեր Հայաստանը և Ադրբեջանը ներգրավված են Լեռնային Ղարաբաղի շրջանի շուրջ հակամարտությունում, որն առավել թեժացավ 1991թ.՝ ԽՍՀՄ-ից այս երկու երկրների անկախացումից հետո: 1994-ից ի վեր գործող հրադադարն էականորեն ուժեղացրեց Հայաստանը:

ՀՖ 2007թ. Հայաստանը՝ նախկին ԽՍՀՄ հանրապետությունը, 1988-ից ի վեր առճակատման մեջ է հարևան Ադրբեջանի հետ՝ գրավելով Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանը և հարակից տարածքները:

ԱԴՐԲԵՋԱՆ [2, p. 91; 3, p. 91; 4, p. 91]

ՀՖ 2003թ. Նավթի գնի տատանումները մեծապես ազդում են երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա: Այնուամենայնիվ, էականորեն աճել են արտաքին ուղղակի ներդրումները նավթագազային արդյունաբերությունում: Նավթային արդյունաբերության համար նպաստավոր են նոր հիմնական նավթամուղների կառուցման ծրագրերը, ինչպիսին է, օրինակ, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը:

ՀՖ 2004թ. Ադրբեջանը ԽՍՀՄ-ից իր անկախությունը ձեռք բերեց 1991թ., որից հետո ընկղմվեց քաղաքական և տնտեսական հեղաշրջումների մեջ: Արտահանման հիմքը հանդիսանում է նավթը, որի արդյունահանումն աճում է 1997-ից ի վեր: Սակայն աղքատությունը, գործազրկության ու կոռուպցիայի բարձր աստիճանը և եկամտի անհավասարու-

թյունը շարունակում են վարակել երկրի տնտեսությունը: Լեռնային Ղարաբաղի շուրջ չկարգավորված հակամարտության պարագայում Ադրբեջանի 20%-ը գրավված է Հայաստանի կողմից:

ՀՖ 2007թ. Ադրբեջանը վերգտավ իր անկախությունը ԽՍՀՄ-ից 1991թ.: Սակայն Լեռնային Ղարաբաղի շրջանի շուրջ Հայաստանի հետ երկարաժամկետ հակամարտությունը Ադրբեջանին իր տարածքի 16%-ի կորուստ արժեցավ:

ՎՐԱՍՏԱՆ [2, p. 185; 3, p. 201; 4, p. 189]

ՀՖ 2003թ. Բարելավվել է Վրաստանի ընդհանուր տնտեսական վիճակը: Ակնկալվում է, որ 2002-ից նախատեսված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումը կբարելավի տարածաշրջանային համագործակցությունը և կխթանի երկրի որոշ տնտեսական հատվածների զարգացումը:

ՀՖ 2004թ. Վրաստանը վերգտավ իր անկախությունը ԽՍՀՄ-ից 1992թ.: Դիտարկվելով իբրև դարպաս Եվրոպայի և Ասիայի միջև՝ Վրաստանը կարող է էականորեն շահել Արևելք-Արևմուտք առևտրից՝ ներառյալ էներգակիրների առևտուրը… Վրաստանի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը տուժում են Աբխազիայի և Հ. Օսիայի անջատողականությունից, Աջարիայի սեպարատիզմից և Վրաստանի տարածք թափանցած Ռուսաստանի և չեչեն ապստամբների *(insurgents)* միջև շարունակվող կոնֆլիկտից: Այս հակամարտությունները Վրաստանի որոշ հատվածներ դարձնում են անկառավարելի: Տնտեսական վիճակը մնում է ծանր հարկահավաքման քրոնիկական ձախողումների, զգալի չափերի ստվերային տնտեսության և կոռուպցիայի բարձր աստիճանի հետևանքով:

ՀՖ 2007թ. Վրաստանը դարձավ անկախ 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո: Նրա հետագա գոյատևումը վտանգվեց քաղաքացիական պատերազմներով և անջատողական շարժումներով: 2006թ. մայիսի 2-ին հայտարարվեց ԱՊՀ-ի՝ Ռուսաստանի կողմից գերիշխվող երկրների այս բլոկի կազմում Վրաստանի անդամակցության վերանայման մասին:

Ինչպես տեսնում ենք, ՀՖ տեղեկատուների՝ Հայաստանին վերաբերող էջերում Արցախը բնութագրվում է որպես գրավյալ տարածք առաջին անգամ միայն 2007-ին: Մինչդեռ Ադրբեջանին նվիրված բաժիններում այս ձևակերպումը հնչում էր դեռ 2004-ից: Ադրբեջանի նկատմամբ օգտագործված «անկախություն ձեռք բերեց» արտահայտության (2004թ.) փոխարինումը «վերգտավ իր անկախությունը» (2007թ.) զվարճալի կլիներ, եթե, սակայն, չենթադրեր մտահոգիչ միտումների առկայություն: Այս իմաստով քիչ մխիթարական է, որ Հայաստանի կողմից «գրավյալ տարածքների» 2004թ. գնահատականը նվազել է 20%-ից՝ 16%-ի 2007թ.:

4. ՀՖ 2007թ. ՏԱՑ տեղեկատու. հարցեր

Ինչո՞ւ է Հայաստանը ՀՖ 2007թ. ՏԱՑ տեղեկատուում կորցրել տարածաշրջանում միակ «Հիմնականում ազատ» երկրի իր կարգավիճակը: Ինչո՞ւ է Հայաստանը Վրաստանի հետ համարյա կողք կողքի հայտնվել «Մասամբ ազատ» տնտեսական դաշտով երկրների նոր՝ միաջանկյալ դասում: Կարելի՞ է դա բացատրել միայն նոր մեթոդաբանության կիրառմամբ, մասնավորապես՝ «Մասամբ ազատ» երկրների (ՏԱՑ 60.0-69.9% արժեքների տիրույթ) դասի նորամուծությամբ: Արդյո՞ք սա իրականության ճիշտ արտացոլումն է:

Վերջին երկու հարցերի պատասխանները, կարծում ենք, դրական չեն: Անհրաժեշտ ենք համարում հետագա դիտարկումներն իրականացնել Հայաստանի և Վրաստանի ՏԱՑ գնահատականների զուգահեռ քննարկմամբ: Դատելով միայն 2007թ. արդյունքների համադրումից՝ Հայաստանի ՏԱՑ ընդհանուր արժեքը (69.4%) աննշան բարձր է Վրաստանի արժեքից (68.7%): Հետաքրքիր մանրամասներն ի հայտ են գալիս միայն այս երկրների ՏԱՑ բաղադրիչների գնահատականների համեմատական վերլուծությունից: Ամբողջացնենք այս տվյալները ստորև բերվող մեկ աղյուսակում, որի վերջին տողում նշվում են նաև 2007թ. Հայաստանի գնահատականների համեմատ Վրաստանի համապատասխան գնահատականների տարբերությունները[1]:

ՀՖ 2007թ. ՏԱՑ տեղեկատու	դրամական մուտքեր	դրամական ելքեր	դրամական հոսքերի ցուցանիշ	ցնցումների դրամական մուտքեր	դրամական մնացորդ	դրամական վճարումներ	դրամական ստացումներ	ժամանակի դրամական ելքեր	ցնցումների դրամական ելքեր	դրամական վերատրամատակարարում	ՏԱՑ
	Հաշվարկային					Վարկանիշային					
Հայաստան	84.5	75.6	93.1	91.6	79.7	60	70	30	29.0	80.9	**69.4**
Վրաստան	78.9	61.8	94.2	91.3	77.9	60	70	30	23.0	99.9	**68.7**
Տարբերություն	5.5	13.8	-1.1	0.3	1.8	0.0	0.0	0.0	6.0	-19.0	0.7
Տարբերությունների գումարը	20.3					-13.0					

[1] Հիշեցնենք, որ ՏԱՑ ընդհանուր արժեքի գոյացման մեջ բոլոր 10 ազատություններն ունեն միևնույն (1/10) կշիռը: Ուստի, օրինակ, որևէ «ազատության» գնահատականում 10% փոփոխությունը կհանգեցնի ՏԱՑ ընդհանուր արժեքի 1.0% փոփոխության:

Ինչպես տեսնում ենք, Վրաստանի ՏԱՑ ամենաէական «առավելությունը» Հայաստանի նկատմամբ (19.0%) պայմանավորված է ՀՖ նոր մեթոդաբանությամբ ներմուծված «վարկանիշային» «Աշխատուժի ազատություն» նոր բաղադրիչի գնահատականով: Հակառակը, Հայաստանի էական առավելությունը պայմանավորված է առաջին հերթին «հաշվարկային» «Առևտրի ազատություն» բաղադրիչով (13.8%): Ուշագրավ է, որ Հայաստանի նկատմամբ Վրաստանի այս «առավելությունը» մասամբ կոմպենսացնում է Հայաստանի առավելությունը Վրաստանի նկատմամբ: Աղյուսակից հետևում է նաև, որ ընդհանուր առմամբ Հայաստանի առավելությունը Վրաստանի նկատմամբ պայմանավորված է բնույթով ավելի օբյեկտիվ՝ հինգ «հաշվարկային» ազատությունների գումարային գնահատականով (20.3%): Մինչդեռ Վրաստանի առավելությունը (13.0%) պայմանավորված է բացառապես «վարկանիշային» ազատությունների գումարային գնահատականով, ավելի ճշգրիտ՝ միայն «Աշխատուժի ազատություն» բաղադրիչի գնահատականով:

Հետաքրքրական են այս երկու ՏԱՑ բաղադրիչների ՀՖ գնահատականները Հայաստանի և Վրաստանի համար [2, pp. 86, 186].

Հայաստան, 2007թ. ՏԱՑ 69.4%	Վրաստան, 2007թ. ՏԱՑ 68.7%
Առևտրի ազատություն՝ 75.6% Հայաստանի համար միջին կշռված սակագինը 2001թ. համար բավական ցածր էր՝ 2.2%: Առևտրի համար նկատելի արգելք է հանդիսանում մաքսային օրենքների ոչ պատշաճ իրականացումը՝ հատկապես ներմուծողների նկատմամբ: Ուստի, բաղադրիչի արժեքից լրացուցիչ հանված է 20%:	**Առևտրի ազատություն՝ 61.8%** 2004թ. միջին կշռված սակագինը կազմել է 9.1%: Առևտրային ռեժիմի ազատականացմանն ուղղված առաջընթացի հետ մեկտեղ առկա են առևտրի գինը բարձրացնող որոշակի ոչ սակագնային արգելքներ, մասնավորապես՝ գյուղատնտեսության սուբսիդավորում, ոչ արդյունավետ և կոռումպացված մաքսային գործընթաց: Այս ոչ սակագնային արգելքները հաշվի առնելու նպատակով բաղադրիչի արժեքից լրացուցիչ հանված է 20%:
Աշխատուժի ազատություն՝ 80.9% Աշխատուժի շուկան գործում է աշխատուժի ճկուն օրենքների պարագայում: Այն կարող է կատարելագործվել զբաղվածության մակարդակի և աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Աշխատողին վարձելու ոչ աշխատավարձային ծախսերը չափավոր են, իսկ ավելորդ աշխատուժի ազատումը՝ համեմատաբար անծախս:	**Աշխատուժի ազատություն՝ 99.9%** Շուկան գործում է աշխատուժի չափազանց ճկուն օրենքների պարագայում, որոնք բարելավում են զբաղվածությունը և աշխատանքի արդյունավետությունը: Աշխատողին վարձելու ոչ աշխատավարձային ծախսերը բարձր են, բայց ավելորդ աշխատուժի ազատումն անծախս է: Աշխատաժամերի ավելացման պայմանագրային օրենքները չափազանց ճկուն են: Վրաստանը աշխարհում առաջատարն է աշխատուժի ազատության տեսանկյունից:

Բերված գնահատականները չեն կարող չզարմացնել: Մի կողմ դնենք այն, որ «առևտրի ազատությունը» հանդիսանում է «հաշվարկային» և բնույթով ավելի «օբյեկտիվ» բաղադրիչ, քան «աշխատուժի ազատություն» վար-

կանիշային բաղադրիչը: Մի կողմ թողնենք նաև այն, որ Հայաստանի համար «առևտրի ազատությունը» հաշվարկելիս՝ դրա արժեքից հանվել է միևնույն «տույժային» մասնահանումը (20%), ինչ Վրաստանի պարագայում: Թեև, ոչ ՀՖ վերը բերված գնահատականներից, ոչ այս բաղադրիչի հաշվարկման մեթոդաբանության նկարագրությունից դա չի հետևում [2, pp. 41-42]:

Նշենք, սակայն, որ «աշխատուժի ազատություն» բաղադրիչի Վրաստանին տրված 99.9% գնահատականն արտառոց է ողջ աշխարհի համար: Դա ընդգծում են նաև իրենք՝ ՀՖ փորձագետները: Ամենայն հավանականությամբ այն կվերանայվի հաջորդ տարիներին: Համենայնդեպս, արդի պետության համար «ավելորդ աշխատուժի անծախս ազատումը» կասկածելի առավելություն է, եթե դա երկրի միակ առավելությունն է: Չենք կարող նաև չնշել, որ համաձայն մեր գնահատականների՝ ավելորդ աշխատուժից «անծախս ազատման» առումով Հայաստանի և Վրաստանի իրավիճակներն իրականում այդքան էլ տարբեր չեն, որքան դա հետևում է ՀՖ գնահատականներից: Էլ չենք խոսում այն լուրջ խնդրի մասին, թե ինչպիսին է Վրաստանում անծախս ազատված «ավելորդ աշխատուժի» ազգային կառուցվածքը[1]: Ուստի, ունենք բոլոր հիմքերը հաստատելու մեր այն կասկածը, թե այս արտառոց գնահատականը տրված է Վրաստանին հենց «կոմպենսացիոն» նպատակներով և/կամ հանդիսանում է *Doing Business 2007: How to Reform. World Bank-ում* տեղ գտած ոչ համարժեք գնահատականների արդյունք [5]:

Առավել հետաքրքիր մանրամասներ են ի հայտ գալիս երկու երկրների «Մոնետար ազատություն» (ՄԱ) հաշվարկային բաղադրիչի գնահատականներում [2, pp. 86, 186].

Հայաստան, 2007թ. ՏԱՑ 69.4%	Վրաստան, 2007թ. ՏԱՑ 68.7%
Մոնետար ազատություն՝ 79.7% 2003-05թթ. սղաճը համեմատաբար ցածր էր՝ կազմելով 2.6%: Ստացված արժեքը հիմնականում բացատրվում է համեմատաբար ցածր և կայուն գներով: Պետական քաղաքականությունը խեղաթյուրում է գնային համակարգը մի շարք սեկտորներում՝ հանրային տրանսպորտ, էլեկտրականություն, գազ և հեռահաղորդակցություն: Գնային այս կարգավորումը հաշվի առնելու նպատակով տվյալ բաղադրիչի արժեքից լրացուցիչ հանված է 10%:	**Մոնետար ազատություն՝ 77.9%** 2003-05թթ. սղաճը համեմատաբար բարձր էր՝ 7.3%: Ստացված արժեքը հիմնականում բացատրվում է համեմատաբար անկայուն գներով: Գնագոյացումը հիմնականում իրականացնում է շուկան, սակայն կառավարությունը կարող է վերահսկել այն պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների կարգավորման միջոցով: Կառավարությունն իրականացնում է գյուղատնտեսական ապրանքների սուբսիդավորում: Ուստի, այս բաղադրիչի արժեքից լրացուցիչ հանված է 5%:

[1] Հարցի դիտարկումը դուրս է հոդվածի շրջանակներից: Բայց ինչո՞ւ է այն դուրս մնում ՀՖ և ԹԻ տեղեկատուների կամ ՀԲ հիշյալ ուսումնասիրության ուշադրության դաշտից: Չէ՞ որ ազգային փոքրամասնությունների ազատությունը տվյալ երկրի տնտեսական և ընդհանուր ազատության էական բաղադրիչներից է:

Ուշադրություն դարձնենք ՏԱՑ «Մոնետար ազատություն» բաղադրիչի արժեքներից «տույժային» տոկոսային հանումների վրա[1]: Հայաստանի պարագայում այն կազմել է 10%, իսկ Վրաստանի համար՝ 5%: Բայց ՀՖ տեղեկատուներից և 2007թ. նոր մեթոդաբանությունը նկարագրող այլ նյութերից բացարձակապես անհասկանալի է, թե ինչու, օրինակ, «գյուղատնտեսական ապրանքների սուբսիդավորումը» ավելի մեղմ զանցանք է տնտեսական ազատականացման տեսանկյունից, քան, օրինակ, էներգետիկ ոլորտում գնագոյացման կարգավորումը: Կասկածելի է նաև հանրային տրանսպորտի կամ էներգետիկ ոլորտում գների վերահսկման բացակայության դրույթը Վրաստանի պարագայում: Համենայնդեպս, Վրաստանի համար օգտագործված «սակայն կառավարությունը կարող է վերահսկել այն (գնագոյացումը) պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների կարգավորման միջոցով» արտահայտությունը միանգամայն կիրառելի է նաև Հայաստանի պարագայում, ուր էներգետիկ ոլորտում արտադրող բոլոր հիմնական հզորությունները և բարձրավոլտ համակարգը պետական սեփականություն են:

Եթե «Մոնետար ազատությունը» որոշվեր միայն «օբյեկտիվ» պարամետրերի արժեքով (վերջին 3 տարիներին սղաճի միջին կշռված արժեք), այլ խոսքերով, եթե չկատարվեին «տույժային» հանումներ, ՄԱ բաղադրիչի արժեքները Հայաստանի և Վրաստանի համար կկազմեին համապատասխանաբար 89.7% և 82.9%: Եթե հաշվի առնենք ՏԱՑ բաղադրիչների հավասար կշիռն ընդհանուր ՏԱՑ գնահատականում (1/10), դա կհանգեցներ Հայաստանի ընդհանուր ՏԱՑ արժեքի 1.0%-ով և Վրաստանի համար 0.5%-ով ավելացմանը: Այս դեպքում Հայաստանի 2007թ. ՏԱՑ ընդհանուր արժեքը կկազմեր 70.4%, Վրաստանինը՝ 69.2%: Եվ Հայաստանը, ոչ թե Վրաստանը, կհամարվեր «Հիմնականում ազատ» երկիր՝ արդեն իսկ ՀՖ նոր մեթոդաբանության համաձայն: Այս դեպքում Հայաստանը կպահպաներ տարածաշրջանում որակապես ազատ երկրի իր բացառիկ դիրքը՝ ճիշտ այնպես, ինչպես դա հետևում էր ՀՖ մինչև 2007թ. տեղեկատուների գնահատականներից: Ավելին, իրադրությունը նույնը կլիներ, եթե անգամ Հայաստանի համար որպես «տույժ» լրացուցիչ հանվեր ոչ թե 10%, այլ 5%, ինչպես Վրաստանի պարագայում: Դա կհանգեցներ Հայաստանի ընդհանուր ՏԱՑ արժեքի 0.5%-ով ավելացմանը: Այն կկազմեր 70.1%, և ուրեմն Հայաստանը նորից կհամարվեր «Հիմնականում ազատ» երկիր՝ ՀՖ նոր մեթոդաբանության համաձայն:

Հարգանքով վերաբերվելով ՀՖ փորձագիտական խմբի վերլուծական ունակություններին՝ չենք կարծում, սակայն, որ վարկանիշային բաղադրիչ-

[1] Խոսքը վերը նշված (1) բանաձևի ԳՎi մեծության մասին է:

ների գնահատումների ճշգրտությունը կարող է գերազանցել 1.0% շեմը (կամ որ նույնն է՝ 0.1% շեմը՝ ըստ ՏԱՑ ընդհանուր արժեքի): Չենք կարծում նաև, որ գների կարգավորման տեսանկյունից գյուղատնտեսական ոլորտը պակաս կարևոր է, քան էներգետիկ ոլորտը՝ առավել ևս Վրաստանի պարագայում, ուր գյուղատնտեսական ոլորտն ավանդականորեն եղել է տնտեսության վճռորոշ հատվածներից մեկը: Հետևաբար, արձանագրենք, որ ՏԱՑ քննարկվող բաղադրիչի առումով 2007թ. Հայաստանը կարող էր և պետք է ճանաչվեր որպես մեր տարածաշրջանում միակ «Հիմնականում ազատ» երկիր, նույնիսկ տնտեսական ազատականացման առումով ավելի խիստ՝ ՀՖ նոր մեթոդաբանության շրջանակներում:

Իսկ ինչո՞վ են պայմանավորված Հայաստանի համար ՏԱՑ 2007թ. արժեքի զգալի նահանջը 2006թ. համեմատ և Վրաստանի առաջխաղացումը: Ավելի դյուրին ընկալելու համար անհրաժեշտ տվյալներն ամբողջացնենք մեկ միասնական աղյուսակում, ուր բերում ենք նաև տվյալ երկրի ՏԱՑ փոփոխությունները 2 տարում, ինչպես նաև երկրի ՏԱՑ բաղադրիչների արժեքների տարբերությունները միմյանց նկատմամբ նույն տարում.

ՀՖ 2006 և 07թթ. ՏԱՑ տեղեկատուներ	դրսևորումը մոմոգնած	դրսևորումը դվմանդամ	դրսևորումը նոմիհովվ	ճկունությամբ դրսևորումը	դրսևորումը մոտդրդ	դրսևորումը վիդրդրամվերդ	դրսևորումը դոմիուդոդոմիվ	ժդրսիումվ դրսևորդոմիդիդ	ճվմովճիուաան դրսևորումը	դրսևորումը վիրատոմվշա	ՏԱՑ
	Հաշվարկային					Վարկանիշային					
Հայաստան, 2007թ.	84.5	75.6	93.1	91.6	79.7	60	70	30	29.0	80.9	**69.4**
Վրաստան, 2007թ.	78.9	61.8	94.2	91.3	77.9	60	70	30	23.0	99.9	**68.7**
Հայաստան, 2006թ.	79.7	75.6	93.3	84.3	79.7	90	90	50	31.0	72.0	**74.6**
Վրաստան, 2006թ.	70.9	62.6	96.0	92.0	75.2	50	70	30	20.0	81.2	**64.8**
Տվյալ տարում ՏԱՑ և նրա բաղադրիչների արժեքների տարբերությունը Հայաստանի և Վրաստանի միջև											
2007թ.	5.5	13.8	-1.1	0.3	1.8	**0.0**	**0.0**	**0.0**	6.0	-19.0	**0.7**
2006թ.	8.7	13.0	-2.7	-7.8	4.5	**40.0**	**20.0**	**20.0**	11.0	-9.2	**9.8**
2006թ. համեմատ երկրի ՏԱՑ և նրա համապատասխան բաղադրիչների արժեքների փոփոխությունը 2007թ.											
Հայաստան	4.8	0.0	-0.2	7.3	0.0	**-30.0**	**-20.0**	**-20.0**	-2.0	8.8	**-5.1**
Վրաստան	8.0	-0.8	-1.8	-0.7	2.7	**10.0**	0.0	0.0	3.0	**18.7**	**3.9**

Ինչպես տեսնում ենք, 2006թ. համեմատ Հայաստանի նահանջը պայմանավորված է հիմնականում «վարկանիշային» ազատությունների 2007թ. արժեքներով՝ 30% նահանջ «ներդրումների ազատությունում» (ՆԱ), 20-ական տոկոս նահանջ «ֆինանսական ազատությունում» (ՖԱ) և «սեփականության իրավունքում» (ՍԻ): Գումարային առումով հենց այս 70% (7.0% ՏԱՑ արժեքում) էական նահանջն է ձևավորել 2007թ. Հայաստանի ՏԱՑ ընդհանուր արժեքի 5.1%-ոց նվազումը 2006-ի համեմատ: Վրաստանի ՏԱՑ արժեքի առաջխաղացումը նույնպես հիմնականում պայմանավորված է «վարկանիշային» ազատություններով՝ 10% առաջխաղացում ՆԱ-ով և 18.7% առաջխաղացում «աշխատուժի ազատությունում» (ԱԱ): Գումարային առումով այս 28.7% (2.87% ՏԱՑ արժեքում) շոշափելի առաջխաղացումն է ձևավորել 2007թ. Վրաստանի ՏԱՑ ընդհանուր արժեքի 3.9% աճը:

Եթե մի պահ ընդհանրապես վերանանք «վարկանիշային» գնահատականներից, ապա միայն «հաշվարկային» ազատություններով Հայաստանի համար 2007թ. պետք է արձանագրվեր ոչ թե նահանջ, այլ գումարային 11.9% առաջխաղացում (1.19% ՏԱՑ արժեքում): Իսկ Վրաստանի համար առաջխաղացումը կկազմեր ընդամենը 7.4% (0.74% ՏԱՑ արժեքում): Այսպիսով, «օբյեկտիվ իրականությանը» համապատասխանելու առումով կարելի է հարցականի տակ դնել 2006թ. համեմատ Հայաստանի ՏԱՑ վիթխարի նահանջը:

ՏԱՑ վարկանիշային բաղադրիչների արժեքների տարբերությունը Հայաստանի և Վրաստանի միջև	ներդրումների ազատություն	ֆինանսական ազատություն	սեփականության իրավունք	ազատություն կոռուպցիայից	աշխատուժի ազատություն
2007թ.	0	0	0	6	-19
2006թ.	40	20	20	11	-9.2

Սակայն բերված աղյուսակը վկայում է առավել արտառոց մի երևույթի մասին: Առանձնացնենք վերը բերված աղյուսակից այն հատվածը, որը վերաբերում է վերջին 2 տարիներին մեր երկրների ՏԱՑ միայն վարկանիշային գնահատականների տարբերություններին (տե՛ս պատուհանում): Ի՞նչ է կատարվել մեկ տարվա ընթացքում: 2006թ. Վրաստանի նկատմամբ Հայաստանի վիթխարի առավելությունը՝ 80%, պայմանավորված վարկանիշային 3 ազատություններով, 2007թ. *հավասարեցվել է զրոյի:* Հիշեցնենք, որ ՀՖ նոր մեթոդաբանության համաձայն՝ 80% վարկանիշային արժեքի փոփոխությու-

նը համարժեք է ՏԱՑ ընդհանուր գնահատականի 8.0% փոփոխությանը, այսինքն՝ երկրների դասային խմբի համարյա մի ողջ տիրույթի (9.99%)։ ՀՖ նոր մեթոդաբանությամբ սա արդեն նշանակում է «որակական» փոփոխություն երկրի «ազատության» դասակարգումային սանդղակում (տե՛ս *Նկար 3)։* Իսկ սա, իրականությանը համապատասխանելու դեպքում, նշանակում է մեկ տարում իրականացված փոքրիկ «հակահեղափոխություն» (կամ «հեղափոխություն»՝ կախված ընթերցողի արժեքային համակարգից)։

Բնական է ենթադրել, որ ազատությունների այսպիսի կորուստը պետք է էապես արտացոլվեր Հայաստանին վերաբերող բաղադրիչների ՀՖ նկարագրական գնահատականներում։ Սակայն այս գնահատականների առավել մանրամասն քննումը (տե՛ս *Հավելված Բ)* բացարձակորեն հակառակի մասին է վկայում։ Կատարված դիտարկումները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ 2007թ. Հայաստանը կարող էր և պետք է ճանաչվեր *Հիմնականում ազատ* երկիր՝ նույնիսկ տնտեսական ազատականացման առումով ավելի խիստ՝ ՀՖ նոր մեթոդաբանությամբ։ Դա պետք է արվեր *առնվազն 4 անգամ, միմյանցից միանգամայն անկախ պատճառներով*՝ մեկ հաշվարկային և երեք վարկանիշային ազատությունների գնահատման ընթացքում (տե՛ս *Հավելված Բ)։* Առավել ևս, որ դա են վկայում ՏԱՑ բոլոր հաշվարկային բաղադրիչների վերլուծական գնահատականները՝ վարկանիշային տույժերից զատ։

Այսպիսով, ՀՖ նոր մեթոդաբանության կիրառումը չէ, որ հանգեցրել է Հայաստանի՝ մեր տարածաշրջանում միակ «Հիմնականում ազատ» երկրի կարգավիճակի կորստին։ Բուն պատճառը բոլորովին էլ «Մասամբ ազատ» երկրների միջանկյալ դասի նորամուծությունը չէ։ Որոշիչն այստեղ մեթոդաբանական դաշտից դուրս գտնվող հանգամանքներն են։ Ստիպված ենք փաստել, որ դրանք ունեն միտումնավոր բնույթ, ինչպես ասում են, ինտենցիոնալ են։ Դրանք ի հայտ են գալիս իրենց բնույթով «սուբյեկտիվ» վարկանիշային բաղադրիչների գնահատականներում և անգամ «օբյեկտիվ» հաշվարկային բաղադրիչների գնահատականներում՝ տույժային մասնահանումների տեսքով։ Դրանք են ապահովում երկրների դասակարգման այն նուրբ մեխանիզմը, որը հարկավոր է ՀՖ փորձագետներին՝ մեթոդաբանական խնդիրներից միանգամայն դուրս գտնվող պատճառներով։

Ուրեմն, ի՞նչ է նշանակում այս ամենը։ Ամենևին հակված չենք կարծելու, թե ՀՖ նոր մեթոդաբանության ներմուծման պատճառը և գնահատականների միտվածության թիրախը մեր տարածաշրջանը կամ հենց Հայաստանն են։ Ընդհակառակը, մեր կարծիքով՝ այս փոփոխությունները պայմանավորված են գլոբալ միտումներով, որոնց ձևավորման մեջ շատ էական է

(եթե ոչ՝ որոշիչ) ԱՄՆ աջ պահպանողական քաղաքական ուժի դերակատարումը: Դրանց թիրախը Հայաստանը չէ, այլ ողջ աշխարհը[1]: Բանն այն է, որ այս փոփոխություններն առավել ցայտուն արտահայտվում են հենց մեր տարածաշրջանում, օրինակ՝ ՏԱՑ փոփոխման դինամիկայի տեսանկյունից Հայաստանի և Վրաստանի զբաղեցրած հակադիր բեևեռային դիրքերը (տե՛ս *Նկար 2):*

Գաղտնիք չէ, որ Վրաստանում «վարդերի հեղափոխությունից» հետո Արևմուտքն ընդհանրապես և ԱՄՆ-ը հատկապես վերիմաստավորեցին իրենց դիրքորոշումն այս երկրի հանդեպ: Հասկանալի է նաև դրա աշխարհաքաղաքական իմաստը՝ հնարավորինս արգելակել կամ սանձել մեր տարածաշրջանում ՌԴ ազդեցության վերահաստատումը, մանավանդ ՌԴ-Իրան առանցքով: Բնական է նաև, որ Հայաստանը հայտնվել է այս ամենի կիզակետում: Սակայն կարծում ենք, որ չափազանց կարևոր է հասկանալ երկու բան: Նախ՝ արդյո՞ք այս գնահատականներն արդար են և համապատասխանում են իրականությանը հարցը պարզապես տեղին չէ: Հնարավոր պատասխաններն իրենց հոգեբանական և զգայական հետևանքներով ապակողմնորոշիչ կլինեն և կշեղեն մեզ պրագմատիկ դաշտից: Եվ երկրորդ՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից ՀՖ 2007թ. տեղեկատուի էջերում մեր տարածաշրջանում ՏԱՑ առաջատարի փոփոխությունը կարևոր և խորհրդանշական ազդակ է: Մեր կարծիքով՝ այլ հանգամանքներից բացի, այն նշանակում է նաև ԱՄՆ պահպանողական քաղաքական դաշտի հետ Հայաստանի Հանրապետության և ողջ հայության քաղաքական համակարգերի միջև համագործակցության համարյա բացարձակ ձախողում՝ մեր քաղաքական նպատակների, արժեքային համակարգի և գործընթացների մատուցման, բացատրման և, դրական իմաստով՝ քարոզչության առումով: Ցավալին այն է, որ այս ձախողումը տեղի ունեցավ պատմական այն փուլում, երբ սկսած XX դարի 80-ականներից՝ աջ պահպանողական քաղաքական ուժն ԱՄՆ-ում դարձավ գերիշխող: ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ այն դարձավ նաև որոշիչ ողջ 90-ականների ընթացքում և առնվազն նոր հազարամյակի առաջին տասնամյակում:

Այս պարագայում սփյուռքահայ կառույցների աշխատանքը հիմնականում ձախակողմյան՝ դեմոկրատական կամ սոցիալիստական քաղաքական և տնտեսական թևերի հետ ԱՄՆ-ում (և ոչ միայն այստեղ) և Հայաստանի հիմնական քաղաքական կառույցների՝ այս ուղղությանն ընդհանուր առմամբ հարելը չէին կարող չհանգեցնել ՀՖ ներկայիս գնահատականներին: Հետևաբար, «ՀՅԴ-ԱՄՆ Դեմոկրատական կուսակցություն» արդյունավետ համագործակցությունն անհրաժեշտ է հավասարակշռել նույնքան

[1] Բավական է հիշել միայն «համընդգրկուն տիրակալություն» *(Full spectrum dominance)* եզրը ԱՄՆ հեռանկարային ռազմավարական փաստաթղթից *(Joint Vision 2020):* Ավելի ծավալուն անդրադարձը կարելի է տեսնել «Աստված և Ռոնալդ Ռեյգանը» խորհրդանշական անվանումը կրող հիմնարար մենագրությունում, որի հրատարակմանն օժանդակել է ՀՖ-ն [6]:

արդյունավետ աշխատող լծակով: Կարծում ենք, որ այդպիսի լծակ կարող է հանդիսանալ, օրինակ «ՀՀ Հանրապետական կուսակցություն-ԱՄՆ Հանրապետական կուսակցություն» արդյունավետ համագործակցության հաստատումը: Եվ ոչ միայն այն պատճառով, որ առկա է այդ կուսակցությունների գաղափարախոսական ներդաշնակություն, այլ որովհետև ՀՀԿ-ն այսօր և մոտ ապագայում աջակողմյան ամենաազդեցիկ և կազմակերպված քաղաքական ուժն է Հայաստանում: Նշված համագործակցության ձևավորումը հրատապ և չափազանց կարևոր է Հայաստանի համար:

Իսկ մակերեսային այն դիտարկումներին, թե «ավարտվում է աջ հեղափոխությունն աշխարհում», ի պատասխան՝ կառաջարկեինք վերլուծել Ֆրանսիայում նախագահական ընտրությունների ընթացքը և դրանց արդյունքները: Անթույլատրելի է անընդհատ հայտնվել պարտվող քաղաքական ուժերի ճամբարում. արդի աշխարհը մոլորվածներին չի ներում: Աջակողմյան, պահպանողական և ազգայնական ուժերը գերիշխող կլինեն աշխարհում առնվազն գալիք տասնամյակի ընթացքում:

Եզրակացություններ

- Հայաստանի համար ավարտվում է տնտեսական դաշտի սրընթաց ու քանակական ազատականացման ժամանակաշրջանը: Հաջորդ քայլերը պայմանավորված պետք է լինեն կոռուպցիայի աստիճանի նվազեցմամբ, դատական համակարգի անկախությամբ ու արդյունավետության բարձրացմամբ և սեփականության իրավունքի ամրապնդմամբ: Դրանք ենթադրում են երկարաժամկետ ու հետևողական ճիգեր ողջ հասարակության չափազանց իներցիոն արժեքային համակարգի փոփոխության ուղղությամբ: Առջևում է հանրապետության տնտեսական ազատականացման *որակական փուլը:*
- Հայաստանն անցած տասնամյակի ընթացքում *հանդիսանում էր,* ներկայումս *հանդիսանում է* և ապագայում էլ *պետք է հանդիսանա* մեր տարածաշրջանի տնտեսական ազատությունների առաջատարը: Այս դիրքի անշեղ պահպանումն ու ամրապնդումը (թե՛ ներքին զարգացումներով, թե՛ արտաքին համագործակցությամբ, թե՛ քարոզչությամբ) հանրապետության մրցունակության և զարգացման գրավականն է: Այս հարցում անտարբերությունը, կրավորական կեցվածքն անթույլատրելի են և վտանգավոր:
- Հայաստանի համար հրատապ և կենսական կարևորություն ունեցող խնդիր է արևմտյան կիսագնդի և եվրոպական տերությունների աջ, պահպանողական և ազգայնական քաղաքական ուժերի հետ արդյունավետ, պատասխանատու և լայնածավալ համագործակցության հաստատումը:

Ապրիլ, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան Ա.,* Հայաստան–տարածաշրջան-աշխարհ. թվեր և փաստեր: Մաս Ա, «Հերիթըջ ֆաունդեյշն» տնտեսական ազատության ցուցիչներ: «Նորավանք» ԳԿՀ, «Հայաստան» տեղեկագիր, #1, 2004, էջ 54-84:
2. 2007 Index of Economic Freedom. Tim Kane, Kim Holmes, Mary O'Grady. The Heritage Foundation, The Wall Street Journal. 2007.
3. 2003 Index of Economic Freedom. Gerald P. O'Driscoll, Jr., Edwin J. Feulner, Mary O'Grady. The Heritage Foundation, The Wall Street Journal and Dow Jones & Co., Inc. 2003.
4. 2004 Index of Economic Freedom. The Heritage Foundation. Gerald P. O'Driscoll, et all. The Wall Street Journal and Dow Jones & Co., Inc. 2004.
5. Doing Business 2007: How to Reform. World Bank. (www.worldbank.org)
6. http://www.heritage.org/Research/WorldwideFreedom/upload/hl_1011.pdf
7. Trancparency Intrenational. Corruption Perceptions Indexes. (www.ti.org)

ПО ПОВОДУ ЕЖЕГОДНИКА *HERITAGE FOUNDATION* ПО ЭКОНОМИЧЕСКИМ СВОБОДАМ

Ара Марджанян

Резюме

Продолжая традиции рубрики «Армения – Регион – Мир: Цифры и факты» изданий фонда «Нораванк», в данной статье анализируются оценки ежегодника «Фонда Наследия» (*Heritage Foundation*) США за 2007г. по экономическим свободам государств нашего региона. Приведены основные результаты этого ежегодника, проанализированы характерные для него методологические изменения. Показано, что Армения, получившая оценку «*частично свободной*» страны, могла и должна была быть оценена как «*в основном свободная*» страна – даже в согласии с новой, более «строгой», методологией ФН 2007г. – как минимум по четырем независящим друг от друга параметрам. Вскрыты побудительные причины подобных оценок ежегодника, описаны механизмы, приведшие к ним. Зафиксированная в ежегоднике ФН за 2007г. потеря Арменией статуса единственного лидера региона по экономической свободе, характерная для прежних оценок ФН, интерпретирована в общем геополитическом контексте.

Հավելված Ա

ՀՅ Տնտեսական ազատության ցուցիչներ, 2007թ. [2]

Դասակարգումը	ՏԱՑ արժեքային տիրույթը
Ազատ	80-100%
Հիմնականում ազատ	70-79.9%
Մասամբ ազատ	60-69.9%
Հիմնականում ոչ ազատ	50-59.9%
Ոչ ազատ (ռեպրեսիվ)	0-49.9%
Չդասակարգված	-

Կարգը	Երկիր	2007 ՏԱՑ		Կարգը	Երկիր	2007 ՏԱՑ
1	Հոնկոնգ	89.3		83	Թուրքիա	59.3
2	Սինգապուր	85.7		84	Շրի Լանկա	59.3
3	Ավստրալիա	82.7		85	Սաուդյան Արաբիա	59.1
4	ԱՄՆ	82.0		86	Սենեգալ	58.8
5	Նոր Զելանդիա	81.6		87	Լեհաստան	58.8
6	Միացյալ Թագավորություն	81.6		88	Կաբո Վերդե	58.4
7	Իռլանդիա	81.3		89	Պակիստան	58.2
8	Լյուքսեմբուրգ	79.3		90	Գայանա	58.2
9	Շվեյցարիա	79.1		91	Գանա	58.1
10	Կանադա	78.7		92	Զամբիա	57.9
11	Չիլի	78.3		93	Գամբիա	57.6
12	Էստոնիա	78.1		94	Հունաստան	57.6
13	Դանիա	77.6		95	Արգենտինա	57.5
14	Նիդեռլանդներ	77.1		96	Մարոկո	57.4
15	Իսլանդիա	77.1		97	Ֆիլիպիններ	57.4
16	Ֆինլանդիա	76.5		98	Տաջիկստան	56.9
17	Բելգիա	74.5		99	Պարագվայ	56.8
18	Ճապոնիա	73.6		100	Դոմինիկյան Հանր.	56.7
19	Գերմանիա	73.5		101	Մոզամբիկ	56.6
20	Կիպրոս	73.1		102	Կամբոջա	56.5
21	Շվեդիա	72.6		103	Թանզանիա	56.4
22	Լիտվա	72.0		104	Հնդկաստան	55.6
23	Տրինիդադ և Տոբագո	71.4		105	Կոտ դ'Իվուար	55.5
24	Բահամներ	71.4		106	Մալավի	55.5
25	Ավստրիա	71.3		107	Ադրբեջան	55.4
26	Թայվան	71.1		108	Էկվադոր	55.3
27	Իսպանիա	70.9		109	Խորվաթիա	55.3

Կարգը	Երկիր	2007 ՏԱՑ		Կարգը	Երկիր	2007 ՏԱՑ
28	Բարբադոս	70.5		110	Ինդոնեզիա	55.1
29	Սալվադոր	70.3		111	Գվինեա	55.1
30	Նորվեգիա	70.1		112	Բոլիվիա	55.0
31	Չեխիա	69.7		113	Բուրկինա Ֆասո	55.0
32	Հայաստան	69.4		114	Բենին	54.8
33	Ուրուգվայ	69.3		115	Բոսնիա և Հերցեգովինա	54.7
34	Մավրիկիա	69.0		116	Եթովպիա	54.4
35	Վրաստան	68.7		117	Կամերուն	54.4
36	Հրվ. Կորեա	68.6		118	Լեսոտո	54.1
37	Իսրայել	68.4		119	Չինաստան	54.0
38	Բոթսվանա	68.4		120	Ռուսաստան	54.0
39	Բահրեյն	68.4		121	Նեպալ	54.0
40	Սլովակիա	68.4		122	Եմեն	53.8
41	Լատվիա	68.2		123	Մալի	53.7
42	Մալթա	67.8		124	Նիգեր	53.5
43	Պորտուգալիա	66.7		125	Ուկրաինա	53.3
44	Հունգարիա	66.2		126	Մավրիտանիա	53.2
45	Ֆրանսիա	66.1		127	Եգիպտոս	53.2
46	Յամայկա	66.1		128	Հսրկծ. Գվինեա	53.2
47	Պանամա	65.9		129	Գաբոն	53.0
48	Մալայզիա	65.8		130	Ջիբութի	52.6
49	Մեքսիկա	65.8		131	Նիգերիա	52.6
50	Թաիլանդ	65.6		132	Ուզբեկստան	52.6
51	Կոստա Ռիկա	65.1		133	Սուրինամ	52.6
52	Հրվ. Աֆրիկա	64.1		134	Ալժիր	52.2
53	Հորդանան	64.0		135	Հաիթի	52.2
54	Օման	63.9		136	Ռուանդա	52.1
55	Նամիբիա	63.8		137	Կենտր. Աֆրիկա	50.3
56	Բելիզ	63.7		138	Վիետնամ	50.0
57	Քուվեյթ	63.7		139	Տոգո	49.8
58	Սլովենիա	63.6		140	Լաոս	49.1
59	Ուգանդա	63.4		141	Սիեռա Լեոնե	48.4
60	Իտալիա	63.4		142	Սիրիա	48.2
61	Նիկարագուա	62.7		143	Բանգլադեշ	47.8
62	Բուլղարիա	62.2		144	Վենեսուելա	47.7
63	Պերու	62.1		145	Բելառուս	47.4
64	Սվազիլենդ	61.6		146	Բուրունդի	46.8
65	Մադագասկար	61.4		147	Չադ	46.4
66	Ալբանիա	61.4		148	Գվինեա Բիսաու	45.7

Կարգը	Երկիր	2007 ՏԱՑ		Կարգը	Երկիր	2007 ՏԱՑ
67	Ռումինիա	61.3		149	Անգոլա	43.5
68	Գվաթեմալա	61.2		150	Իրան	43.1
69	Թունիս	61.0		151	Կոնգոյի Հանր.	43.0
70	Բրազիլիա	60.9		152	Թուրքմենստան	42.5
71	Մակեդոնիա	60.8		153	Բիրմա (Մյանմա)	40.1
72	Կատար	60.7		154	Զիմբաբվե	35.8
73	Կոլումբիա	60.5		155	Լիբիա	34.5
74	Միացյալ Արաբ. Էմիրություններ	60.4		156	Կուբա	29.7
75	Ղազախստան	60.4		157	Հս. Կորեա	3.0
76	Հոնդուրաս	60.3		158	Սերբիա և Մոնտենեգրո	-
77	Լիբանան	60.3		159	Պապուա – Նոր Գվինեա	-
78	Մոնղոլիա	60.1		160	Սամոա	-
79	Ղրղզստան	59.9		161	Իրաք	-
80	Ֆիջի	59.8		162	Կոնգոյի Դեմ. Հանր.	-
81	Մոլդովա	59.5		163	Սոմալի	-
82	Քենիա	59.4		164	Սուդան	-

Հավելված Բ

ՀՖ ՏԱՅ որոշ ազատությունների գնահատականները Հայաստանի և Վրաստանի համար [2, pp. 86, 186]

Հայաստան 2007թ. (2006թ., փոփոխություն)	Վրաստան 2007թ. (2006թ., փոփոխություն)
Ներդրումային ազատություն, 60% (90%, նահանջ 30%) Պաշտոնապես տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում բիզնեսի հիմնման համար օտարերկրյա ներդրողները տեղաբնակ հայերի հետ ունեն հավասար իրավունքներ: Ոչ ռեզիդենտները չեն կարող հողի սեփականատեր լինել, սակայն ազատ են վարձակալել այն: Արտաքին ներդրումների համար հիմնական խոչընդոտները գործարար օրենսդրության թերակատարումը և բյուրոկրատիայի կոռումպցվածությունն են: Արժույթի միջազգային հիմնադրամը զեկուցում է, որ տարադրամային հաշիվների օգտագործման, ընթացիկ կամ անտեսանելի փոխանցումների վերահսկումը կամ սահմանափակումները բացակայում են:	**Ներդրումային ազատություն, 60% (50%, աճ 10%)** Գործարարության համար գրավիչ միջավայր ստեղծելու առումով Վրաստանում իրականացվում են ծավալուն կառուցվածքային բարեփոխումներ: Արտաքին ներդրողները տեղաբնակների հետ հավասար դիտարկում են ստանում: Տեղական ընկերությունների, բաժնետոմսերի, բոնդերի կամ այլ սեփականության գնման կամ դրանցում ներդրման համար սահմանափակումները բացակայում են, և տեղական բիզնեսի մասնակցություն չի պահանջվում: Տեղական և արտերկրի ներդրողները կարող են օգտվել «մեկ պատուհան» համակարգից՝ 24 ժամվա ընթացքում գործարարության լիցենզիա ստանալու համար: Արտերկրի ընկերություններն ազատ կարող են մասնակցել մասնավորեցմանը: Ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները կարող են տարադրամային հաշիվներ ունենալ: Տարադրամային վճարումների և փոխանցումների համար առկա են սահմաններ և ստուգումներ: Դրամային գործարքները չեն սահմանափակվում, սակայն գրանցվում են: Արտաքին ներդրումների հիմնական խոչընդոտներ են հանդիսանում արդարադատության անարդյունավետությունը և կոռուպցիան:
Ֆինանսական ազատություն, 70% (90.0%, նահանջ 20.0%) Հայաստանի թերզարգացած ֆինանսական համակարգում գերիշխում են բանկերը: 1990-ականների բանկային ճգնաժամից հետո կառավարությունը ստանձնեց բանկերի մասնավորեցման և կարգավորման ռեֆորմների գործընթացը, ներառյալ Միջազգային հաշվապահական ստանդարտների ընդունումը և նվազագույն կապիտալի մասին պահանջները: Նոր օրենքների և ստանդարտների պարագայում փակվեցին կամ միաձուլվեցին շատ բանկեր. դրանց թիվը 2001թ. 31-ից իջավ մինչև 21-ի՝ 2005թ. մարտի դրությամբ: Բոլոր 21 բանկերը մասնավոր են, դրանցում պետությունն այլևս մասնաբաժին չունի: Բանկերում առկա են պարտքի մարման *(debt recovery)* հետ կապված դժվարություններ: Բոլոր ֆինանսական կառույցները զննվում են ԿԲ-ի կողմից: Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կարգավորում է փոքրածավալ ապահովագրական ոլորտը: Թույլատրվում են արտասահմանյան ապահովագրական բանկերը և ընկերությունները: Ակտիվ բորսան ընդգրկում է 190 ցանկավորված ընկերություններ:	**Ֆինանսական ազատություն, 70% (70%)** 1990-ից սկսած՝ Վրաստանի բանկային համակարգը զգալիորեն ազատականացել է: Կենտրոնական բանկը ստանձնել է վերահսկողական դեր և պարտադրում է պարտավորեցնող հաշվետվություն և կապիտալի նկատմամբ պահանջներ, ինչը հանգեցրել է մի շարք բանկերի փակման կամ միաձուլման: 1995թ. 247 բանկերի փոխարեն 2005թ. ապրիլի դրությամբ առկա էին 20 բանկ: Ընդհանուր բանկային արժեքների 87%-ը պատկանում է առաջին 6 բանկերին: Չմարվող վարկերը շարունակում են խնդրահարույց մնալ որոշ բանկերի համար: Արտերկրի բանկերի և նրանց մասնաճյուղերի առկայությունը ողջունվում է: Արտաքին ներդրողները հանդիսանում են մի քանի բանկերի հիմնական տերերը: Պետությունն այլևս մասնաբաժին չունի որևէ բանկում: Չնայած միաձուլմանը, բանկային սեկտորը շարունակում է մնալ թույլ և ռիսկային: Ապահովագրական սեկտորում առկա է արտերկրի շոշափելի ներկայություն: Բորսան փոքր է և թերզարգացած:

Հայաստան 2007թ. (2006թ., փոփոխություն)	Վրաստան 2007թ. (2006թ., փոփոխություն)
Սեփականության իրավունք, 30% (50%, նահանջ 20%) Արդարադատությունը ենթարկվում է գործադիրի ազդեցությանը, թերզարգացած է և կոռումպացված, ինչն էականորեն խոչընդոտում է պայմանագրերի կատարմանը: 2005թ. նոյեմբերին իրականացված սահմանադրական փոփոխությունները նպատակ ունեին բարձրացնել արդարադատության անկախությունը, սակայն հարկ է տեսնել, թե ինչպես դրանք կներդրվեն պրակտիկայում: Հատուկ տնտեսական դատարանը քննում է կոմերցիոն վեճերը:	**Սեփականության իրավունք, 30% (30%)** Կոռուպցիան արդարադատությունում տակավին խնդիր է, չնայած կառավարության՝ դատարանների արդյունավետության և արդարության ամրապնդմանն ուղղված էական ջանքերին: Հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում կառավարությունը հեռացրել է հազարավոր քաղծառայողների և ոստիկանների, դատապարտել որոշ բյուրոկրատների: Թե՛ օտարերկրացիները, թե՛ վրացիները հարցականի տակ են դնում մասնավոր սեփականության պաշտպանման հարցում արդարադատական համակարգի ունակությունը:

Բերված գնահատականները չեն կարող չզարմացնել: Սպասված «հակահեղափոխության» և ոչ մի ակնարկ: Եթե մի պահ մոռանանք տոկոսների մասին և պարզապես ընթերցենք դրանք, ապա դժվար կլինի հավատալ, որ այս բաղադրիչները ստացել են բացարձակապես միևնույն գնահատականները: Համեմատական տեսանկյունից կարելի է պնդել, որ երկու երկրների այս բաղադրիչների հավասար թվային գնահատականները հակասության մեջ են դրանց նկարագրական գնահատականների հետ, ինչը պարզապես երկու երկների դիտարկված ազատությունների նույնացման, հավասարեցման կոպիտ փորձ է՝ զուրկ որևէ հիմնավորումից: Վարկանիշային ազատությունների գնահատման ճկունության նման չարաշահումը կարող է ստվեր գցել ՀՖ տեղեկատուների արժանահավատության վրա:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի համար առավելագույն նահանջը (30%) արձանագրված է «Ներդրումային ազատություն» (ՆԱ) վարկանիշային բաղադրիչի համար. 2007թ. գնահատականը կազմել է 60%՝ 2006թ. 90%-ի համեմատ: Ինչպե՞ս է դա բացատրվում:

Հիշեցնենք, որ համաձայն ՀՖ մեթոդաբանության՝ ՆԱ-ն բացառապես որակական բնույթի «վարկանիշային գնահատական» է: Այսինքն՝ այն չի հաշվարկվում տվյալ երկրի տնտեսական ազատությունը բնութագրող որևէ պարամետրի թվային արժեքների հիման վրա: ՆԱ-ն գնահատվում է 0-100% տիրույթում, 10% քայլով և հիմնված է 10 բառային գնահատականներից բաղկացած սանդղակի կիրառման վրա: Թարգմանաբար ներկայացնենք ՆԱ առաջին հինգ գնահատականների նկարագրությունը.

(ՆԱ=100%): Տվյալ երկրում Արտաքին ներդրումները (ԱՆ) խրախուսվում և դիտարկվում են տեղական ներդրումներին հավասար, թափանցիկ ԱՆ օրենքների և արհեստավարժ ու արդյունավետ բյուրոկրատիայի պարագայում: Գոյություն չունեն ազգային անվտանգության հետ կապված հատվածներում կամ անշարժ գույքի նկատմամբ ԱՆ սահմանափակումներ: Սեփականության բռնագրավումն արգելված է: Տարադրամի փոխանակումը և միջազգային վճարումները հասու են և ոչ ռեզիդենտներին: Դրամային փոխանցումները և գործարքները սահմանափակումների չեն ենթարկվում:

(ՆԱ=90%): Նույնն է, ինչ վերը՝ հետևյալ բացառությամբ: Ազգային անվտանգության հետ կապված հատվածներում ԱՆ նկատմամբ առկա են միայն սակավա-

թիվ խոչընդոտներ: Սեփականության բռնագրավման դեմ առկա են պետական երաշխիքներ: Դրամային փոխանցումները և գործարքները սահմանափուկմների գրեթե չեն ենթարկվում:

(ՆԱ=80%): Նույնն է, ինչ վերը՝ հետևյալ բացառությամբ: Թափանցիկ ԱՆ օրենքները ենթարկվում են բյուրոկրատական կամ այլ ոչ պաշտոնական խոչընդոտների նվազագույն չափով: Տարադրամի փոխանակումը, ինչպես նաև դրամային փոխանցումները և գործարքները ենթարկվում են շատ սակավաթիվ սահմանափակումների:

(ՆԱ=70%): Նույնն է, ինչ վերը՝ հետևյալ բացառությամբ: Առկա են ԱՆ որոշակի սահմանափակումներ՝ հիմնված միօրինակ ընդհանուր օրենքների վրա, կամ այնպիսի հատվածներում, ինչպիսիք են էլեկտրաէներգետիկ համակարգը *(utilities),* բնական պաշարները կամ ազգային անվտանգության հետ առնչվող հատվածները: Տարադրամի փոխանակումը և միջազգային վճարումները ենթակա են որոշակի սահմանափակումների:

(ՆԱ=60%): Նույնն է, ինչ վերը՝ հետևյալ բացառությամբ: Ընդհանրապես ԱՆ-ը խրախուսվում են, սակայն որոշակի հատվածներում կարող են և հավասար չդիտարկվել: ԱՆ օրենքներն այնքան էլ թափանցիկ չեն և/կամ ԱՆ-ը հանդիպում են բյուրոկրատական խոչընդոտների: Սեփականության բռնագրավումը չափազանց անհավանական է, և պետությունը երաշխավորում է փոխհատուցում: Դրամային փոխանցումները և գործարքները ենթարկվում են որոշակի սահմանափակումների:

Ավելացնենք միայն, որ այս բաղադրիչի գնահատականներում անշարժ գույքի գնման նկատմամբ արտաքին ներդրումների սահմանափակումները դիտարկվում են միայն ՆԱ 50% և ավելի քիչ գնահատականներում:

Այսպիսով, ՆԱ 90% գնահատականի համեմատ հաջորդ՝ ավելի ցածր գնահատականներն ամրագրում են «վատթարացում» հետևյալ 4 ուղղություններով. ա) արտաքին ներդրումների նկատմամբ բյուրոկրատական և կոռուպցիոն խոչընդոտների աստիճանով, բ) արտաքին ներդրումների համար ոլորտային սահմանափակումներով, գ) սեփականության իրավունքի սահմանափակումներով, դ) տարադրամի փոխանակման, միջազգային վճարումների և դրամային փոխանցումների ու գործարքների նկատմամբ խոչընդոտների աստիճանով:

Այսպես, ՆԱ բաղադրիչի 90%-ից 80% գնահատականի անցումը հիմնականում պայմանավորված է ա) կետով. արտաքին ներդրումների նկատմամբ բյուրոկրատական կամ այլ ոչ պաշտոնական խոչընդոտների նվազագույն աստիճանի առկայությամբ: Ավելի էական փոփոխություն է արձանագրում 80%-ից 70% գնահատականի անցումը. այն արտաքին ներդրումների համար ենթադրում է սահմանափակումներ «այնպիսի հատվածներում, ինչպիսիք են էլեկտրաէներգետիկ համակարգը *(utilities),* բնական պաշարները կամ ազգային անվտանգության հետ առնչվող հատվածները»: Վերջապես, 70%-ից 60% գնահատականի անցումը ենթադրում է ընդհանուր վատթարացում վերը նշված բոլոր 4 ուղղություններով: Այսպիսով, ամենաէական վատթարացումը պայմանավորված է արտաքին ներդրումների նկատմամբ մի շարք տնտեսական ոլորտների «փակումով», և արձանագրվում է 80%-ից 70% ՆԱ գնահատականի անցումով: Մնացած պարագաներում հիշյալ ուղղություններով ամրագրվում է «խոչընդոտների պրակտիկ բացակայու-

թյուն», իրադրության փոփոխություն «որոշակի խոչընդոտների առկայություն» ուղղությամբ:

Բայց, ինչպես 2006 և նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի «այնպիսի հատվածներ, ինչպիսիք են էլեկտրաէներգետիկ համակարգը *(utilities),* բնական պաշարները կամ ազգային անվտանգության հետ առնչվող հատվածները», Հայաստանում բաց էին և շարունակում են բաց մնալ արտաքին ներդրումների համար: Ավելին, 2007թ. արձանագրված է արտաքին ներդրումների զգալի ավելացում հատկապես էներգետիկ ոլորտում: Հետևաբար, Հայաստանի պարագայում այս բաղադրիչի համար 60% գնահատականը պարզապես անհեթեթ է՝ առաջին հերթին հենց ՀՖ նոր մեթոդաբանության տեսանկյունից[1]:

Մեր կարծիքով՝ Հայաստանի համար այս բաղադրիչի 2007թ. համարժեք գնահատականը պետք է կազմեր 80%, ինչը միանգամայն պատճառաբանված կլիներ ՀՖ նոր մեթոդաբանության տեսանկյունից: Այս դեպքում (ՆԱ բաղադրիչում 10%, այլ ոչ թե 30% նահանջ) Հայաստանի 2007թ. ՏԱՑ ընդհանուր արժեքը 2006թ. համեմատ կնվազեր ոչ թե 5.1, այլ 3.1%-ով և կկազմեր 71.4%՝ ներկայիս 69.4%-ի փոխարեն: Ուստի, ևս մեկ անգամ Հայաստանը կարող էր և պետք է ճանաչվեր «Հիմնականում ազատ» երկիր, որպես այդպիսին՝ միակը տարածաշրջանում:

Նման վերլուծություն կարելի է կատարել նաև «Ֆինանսական ազատություն» բաղադրիչի համար, ինչը մասնագիտական բնույթի մի շարք պարզաբանումներ է պահանջում: Ուստի սույն հոդվածի շրջանակներում՝ ծավալի առումով, հարկ չենք համարում անդրադառնալ դրանց: Ասենք միայն, որ մեր գնահատումներով Հայաստանի 2007թ. այս բաղադրիչի համարժեք գնահատականը կազմում է 80%: Հետևաբար, այստեղ նույնպես նահանջը պետք է կրճատվի 20%-ից մինչև 10%-ի, և Հայաստանը նորից պետք է ճանաչվեր «Հիմնականում ազատ» երկիր:

Անդրադառնանք նաև «Սեփականության իրավունք» (ՍԻ) բաղադրիչին: Այստեղ, ցավոք, չենք կարող չհամաձայնել ՀՖ փորձագետների հետ. 2007թ. այս բաղադրիչով Հայաստանի նահանջը վիճարկելի չէ՝ հատկապես հիշելով Հյուսիսային պողոտայի կառուցման հետ կապված տարաբնակեցման գործընթացը և այլ փաստեր: Սակայն պետք է նշենք նաև, որ համաձայն ՍԻ վարկանիշային սանդղակի՝ այստեղ, մեր կարծիքով, միանգամայն համարժեք կլիներ 10%, այլ ոչ թե 20% նահանջը:

Ներկայացնենք ՀՖ կողմից կիրառվող ՍԻ բաղադրիչի վարկանիշային սանդղակի 50% և 40% գնահատականները [2, pp. 49-50].

ՍԻ=50%: Դատական համակարգն անարդյունավետ է, առկա են ձգձգումներ: Կոռուպցիան կարող է առկա լինել, արդարադատությունը կարող է ներազդվել իշխանության այլ թևերի կողմից: Բռնագրավումը հնարավոր է, բայց հազվագյուտ:	**ՍԻ=40%:** Դատական համակարգը խիստ անարդյունավետ է, իսկ ձգձգումները՝ այնքան երկար, որ խափանվում է դատական համակարգի կիրառումը: Առկա է կոռուպցիան, իսկ արդարադատությունը ներազդվում է իշխանության այլ թևերի կողմից: Բռնագրավումը հնարավոր է:

[1] Հավանաբար, ՀՖ փորձագետների ականջին չեն հասել «երկրի բոլոր ռազմավարական օբյեկտներն օտարին հանձնելու» մասին մեզ այդքան ծանոթ «աղաղակները»:

Բանն այն է, որ հաջորդ՝ 30% գնահատականը խստացնում է բերված ՍԻ գնահատականները *միայն* «կոռուպցիայի» առումով [2, p. 50]: Ուստի, անհրաժեշտ է դիտարկել այս հանգամանքը մի փոքր ավելի մանրամասն:

ՀՖ նոր մեթոդաբանության թիվ 9 «վարկանիշային» ազատությունը ազատությունն է կոռուպցիայից (ԱԿ): Ինչպես և նախորդ հրատարակումներում, ՀՖ 2007թ. տեղեկատուում նույնպես ՏԱՑ այս բաղադրիչն ուղղակիորեն համարժեք է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» (ԹԻ) հայտնի հասարակական կազմակերպության տեղեկատուներում հրապարակվող «Կոռուպցիայի ցուցիչների» (ԿՑ) արժեքներին[1]: Սովորաբար ՀՖ տվյալ տարվա տեղեկատուում օգտագործվում են ԹԻ նախորդ տարվա հրապարակած ԿՑ արժեքները: Այսպես, ՀՖ 2007թ. ՏԱՑ այս բաղադրիչը հաշվարկված է ըստ ԹԻ 2006թ. տեղեկատուի արդյունքների:



Ավելի մանրամասն դիտարկենք ԹԻ տեղեկատուների ԿՑ արժեքները [7]: Դրանք գնահատվում են ԹԻ մշակած մեթոդաբանության համաձայն՝ 1.0-ից 10.0 դիսկրետ սանդղակով: ԿՑ 1.0 արժեքը տրվում է չափազանց կոռումպացված երկրին, իսկ 10.0-ը տրվում է կոռուպցիայից գրեթե զերծ երկրին: ՀՖ ՏԱՑ նշված ԱԿ բաղադրիչի գնահատականը պարզապես ԹԻ ԿՑ արժեքն է՝ բազմապատկված 100%-ով: Հայաստանի համար ԹԻ ԿՑ 2006թ. արժեքը կազմում էր 2.9: Ուստի, ՀՖ 2007թ. տեղեկատուում Հայաստանի ՏԱՑ «Ազատությունը կոռուպցիայից» գնահատված է 29%: Պետք է ավելացնել, որ բացի ԿՑ արժեքներից, ԹԻ տեղեկատուներում բերվում է նաև դիտարկված բոլոր երկրների շարքում տվյալ երկրի կարգը՝ ըստ ստացված ԿՑ արժեքի: Այստեղ միևնույն ԿՑ արժեք ստացած մի քանի երկիր կարող են զբաղեցնել միևնույն կարգային տեղը: Հաշվի առնելով այն փաստը, որ

[1] Corruption Perceptions Index.

տարբեր տարիներին ԹԻ կողմից դիտարկվում են աշխարհի տարբեր թվով երկրներ, տվյալ երկրի կարգային տեղի փոփոխությունը տվյալ տարում դեռևս անհրաժեշտաբար չի նշանակում ԿՑ արժեքի փոփոխություն:

Այսպես, *Նկար 5-ում* բերված է մեր տարածաշրջանի երկրների կարգային տեղերի փոփոխության գրաֆիկը՝ կառուցված ըստ ԹԻ վերջին 6 տարիների տեղեկատուների [7]: Ինչպես կարելի է դատել այս գրաֆիկից, Հայաստանի համար վերջին տարիներին նկատելի է կարգային դիրքի հաստատուն նահանջ, որը, սակայն, բացատրվում է նրանով, որ վերջին 3 տարիների ընթացքում ԹԻ կողմից դիտարկված երկրների ընդհանուր թիվն աճել է՝ 146-ից (2004թ.) հասնելով 163-ի (2006թ.): Ստորև բերվող աղյուսակում ամբողջացնում ենք մեր տարածաշրջանի երկրների համար ԹԻ վերջին 6 տարիների համար ԿՑ արժեքները, նրանց կարգային տեղերը և տվյալ տարում դիտարկված աշխարհի երկրների ընդհանուր թիվը.

Երկրներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Երկրների կարգը ԹԻ կողմից դիտարկված բոլոր երկրների մեջ, ըստ ԿՑ արժեքների							
Հայաստան	76			78	82	88	93
Վրաստան			85	124	133	130	98
Ադրբեջան	87	84	95	124	140	137	130
Ռուսաստան	82	79	71	86	90	126	121
Թուրքիա	50	54	64	77	77	65	60
Իրան				78	87	88	105
Երկրների ընդհանուր թիվը	**90**	**91**	**102**	**133**	**146**	**159**	**163**
Երկրների ԿՑ արժեքը							
Հայաստան	2.5			3.0	3.1	2.9	2.9
Վրաստան			2.4	1.8	2.0	2.3	2.8
Ադրբեջան	1.5	2.0	2.0	1.8	1.9	2.2	2.4
Ռուսաստան	2.1	2.3	2.7	2.7	2.8	2.4	2.5
Թուրքիա	3.8	3.6	3.2	3.1	3.2	3.5	3.8
Իրան				3.0	2.9	2.9	2.7

Ինչպես տեսնում ենք, 2005 և 2006թթ. Հայաստանի ԿՑ արժեքը մնացել է անփոփոխ: Այսպիսով՝ փաստենք, որ համաձայն ԹԻ տեղեկատուների՝ Հայաստանի ԿՑ արժեքը 2005 և 2006թթ. չի փոփոխվել և կազմել է 2.9 միավոր (29%՝ ՀՖ մեթոդաբանության համաձայն): Հետևաբար, ԹԻ փորձագետների գնահատմամբ՝ չի փոփոխվել նաև մեր հանրապետության կոռուպցիայի աստիճանը: Փոխվել է միայն Հայաստանի կարգային տեղն ընդհանուր վարկանիշային աղյուսակում՝ 2006թ. 159 երկրների մեջ 88-րդ դիրքից մինչև 163 երկրների մեջ 93-րդը՝ 2007թ.:

Ուրեմն, «Սեփականության իրավունք» բաղադրիչի 30% գնահատականի կիրառումը Հայաստանի հանդեպ 2007թ. համարժեք չէ: Մեր կարծիքով՝ այն պետք է կազմեր 40%: Այս պարագայում նույնպես՝ ՏԱՑ արդեն 1.0% ավելացած արժեքով Հայաստանը պետք է ճանաչվեր մեր տարածաշրջանում միակ «Հիմնականում ազատ» երկիր՝ ՀՖ նոր մեթոդաբանության շրջանակներում: